

15925

ԳՈՒՄԱՆ


(Քիմիական և ֆիզիկական
ճիշդագիտություն)

Ն Ա Խ Ա Գ Ի Ժ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԵՎ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՏԻԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ



355.3

1907

7-94

LIBRAIRIE ORIENTALE
H. SAMUELIAN
51, RUE MONSIEUR-LE-PRINCE
PARIS VI^e - DAN. 88-65

355.3
7-94


413

ԳՈՒՄԱՆ


(Տիկնուհի. Անջ-Հովհաննիսյան)

Ն Ա Խ Ա Գ Ի Ժ


ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ



ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԵՐԵՎ ԳԼԽԱՒՈՐ ՀԱՏԻԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ



11254



1907

2001

2010

Ե Ր Կ ՈՒ Խ Օ Ս Ք

Այս մախագիծը զրաւոր առաջիմ փորձն է մեզամում, կազմած մի ամձմաւորութեամ ձեռքով, հետեւապէս՝ ամ- մըշակ և պակասաւոր: Ուրեմն, սրա մշակումն ու լը- րացումը ժամանակի խնդիր է և կարօտ հաւաքակամ (կօլ- լեկտիվ) աշխատամքի: Այսպիսի մի աշխատամք հաւաքա- քար զլուխ բերելու համար, ուրիշ աւելի մպատակայար- մար ու գործնակամ միջոց չգտմեւելով, խնդրում է բոլոր ձեռնհաս ամձերից՝ դրկել իրեմց դիտողութիւններն ու լըրա- ցումները գրքոյկիս հեղինակին:

93011-42

132



1011-2002

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

Յեղական կամ ազգային ընդհարումները հետեւանք են պատմական, կրօնական, տնտեսական ու քաղաքական խճճած պայմանների և պատճառները միշտ լինում են աւելի խոր ու բարդ, քան առհասարակ կարծում են մարդիկ, և թիւրիմացութեամբ, առիթներն ընդհանրապէս ընդունում են իբրև պատճառներ: Բայց ժողովուրդների ընդհարման բարդ պայմանների ուսումնասիրութիւնն ու լուսաբանութիւնը դուրս լինելով ներկայ նախագծի նպատակից, կանգ չենք առնում դրա վրայ:

Միայն մի բան ամենքի համար պէտք է լինի շատ պարզ և միանգամայն որոշ: Այն՝ որ ազգային ընդհարումների ժամանակ, անկախ կողմերի քանակից ու որակից, անկախ նրանց յարաբերական ոյժից, տուժում է ո՛չ թէ մի, այլ անպայման երկու կողմը, միայն այն տարբերութեամբ՝ որ թոյլ կողմը տուժում է աւելի շատ, իսկ ուժեղը՝ համեմատաբար քիչ: Եւ տուժում են ո՛չ միայն ֆիզիքապէս ու տնտեսապէս, այլ և կուլտուրապէս:

Ձանգածային (մասսայական) ընդհարումների ընթացքում չկայ մեղաւոր ու անմեղ, չկայ սեռ ու հասակ—անխտիր ու անինայ ջարդում են ամենքը. առևտուրը կանգ է առնում. արհեստն ու երկրագործութիւնը մատնում են անգործութեան. տասնեակ տարիների քրտնաթոր աշխատանքի տնտեսութիւնը, լինին նա շարժական թէ՛ անշարժ, արւում է հրդեհի ու աւարի. վաստակի բոլոր աղբիւրները ցամաքում են, իսկ կենսական մթերքները՝ ընդհակառակը, թանկանում օրէցօր: Մարդկանց մէջ արթնանում ու զարգանում են գազանային հակումները. ոճիրը դառնում է քաղաքացիական իրաւունք. գողերն ու աւաղակները ստանձնում են պաշտպանի դեր՝ ապագայում հասարակութեան գիւննոր և աւելի մեծ շարիք դառնալու համար. բորբոքւում է ազգային թշնամութիւնն ու ատելութիւնը. ինչ որ կարելի է վերածւում է զէնքի ու հրանիւթի, և մարդասպանութիւնը դառնում է նպատակ. դրամաշորթութիւնը (շանտաժ) ծաւալւում է արագօրէն. անբարոյականութիւնը ընդունում է լայն չափեր. մարդիկ վայրենանում և բարքերը կոպտանում են: Մտաւոր կեանքը սառչում է. մատաղ սերնդի կրթութիւնը դադարում, և արիւն թափելը դառնում է դաստիարակութեան միջոց:

Իւ սա ընդհարման վիսաների բնորոշումն է դեռ խոշոր գծերով: Բայց այսքանն էլ բաւական է հասկանալու համար, թէ ո՛րչափ խոր ու լայն է չարիքը: Այս սոսկալի արհաւիրքի առաջը, անշուշտ, պէտք է առնելի

վաղօրօք, նախ քան նրա ձեւաւորւիլն ու արտայայտւիլը, դեռ իր նախանշանների շրջանում,— և բարոյական այդ ծանր պարտականութիւնը ընկնում է հակամարտ ազգերի գիտակից տարրերի, մանաւանդ յեղափոխական կուսակցութիւնների վրայ:

Այստեղ ըստ ինքեան ծագում է մի շատ գործնական հարց, թէ ո՞րոնք են արդեօ՛ք նախանշանները ազգային ընդհարման և ի՞նչպէս կարելի է առնել այդ մեծ չարիքի առաջը:

Միա պատասխանը պէտք է որոնել մօտիկ անցեալի դառն փորձերի ու փորձանքների մէջ:

Պատմական, կրօնական, տնտեսական ու քաղաքական աննպաստ պայմանների շնորհիւ, երկար ժամանակի ընթացքում, կողք-կողքի ապրող հարեան ժողովուրդները—(թողի ուրոյն գոյութեան և ուժեղի գերիշխանութեան բնագոյով—կաթիլ-կաթիլ թունաւորում են իրար: Եւ երբ թոյնը կատարում է իր քայքայիչ ներգործութիւնը, գրգռած դրացի ժողովուրդները սկսում են իրարու նայել խեթ ու խորթ, բեղմնաւորում է փոխադարձ խուլ տրտունջ և ապա այդ համար տրտունջը փոխարկւում է բարձրաձայն դժգոհութեան զանազան խաւերում: Յետոյ բողոքի այդ ձայները մտնում են մամուլի էջերը՝ իբրև լուրեր. լուրերը դառնում են թղթակցութիւններ և թղթակցութիւնները՝ առաջնորդող յօդաւածներ: Խօսքի հետ զուգընթաց գնում է և՛ գործը, երկու տարբեր ցեղերին պատկանող անհասանելի, ղեկավարելով սեփական նեղ շահերով, իրարու

պատճառում են փոխադարձ զրկանքներ—բարոյական ու տնտեսական,—գիժում են նոյն իսկ ծեծի բիրտ միջոցին և կանգ չեն առնում մինչև անգամ սպանութեան առաջ. մարդասպանութիւնը հետզհետեւ ընդունում է քրոնիկ բնոյթ և դա արդէն վերջին քայլն է դէպի զանգւածային (մասսայական) և ապա ազգային ընդհարումը: Ազգային ընդհարման այս նախաշրջանում է, որ շուտափոյթ օգնութեան պիտի հասնեն ժողովուրդների գիտակից տարրերն ու մամուլը, իր բնցեռանդի ամբողջ թափով և անպայման անկեղծութեան շեշտով:

Թւում է, սակայն, որ մամուլի ու գիտակից տարրերի էապէս խաղաղարար նշանակութեան վերաբերմամբ ընթերցողի մէջ ծագում է թերահաւատութիւն:

Եւ այդ թերահաւատութիւնը գուցէ ունի իր հիմունքը երկու պատճառով. նախ. քանի որ ազգային ընդհարումները մենք համարում ենք անխուսափելի հետեանք պատմական որոշ պատճառների, հապա ուրեմն խօսք ու գրիչը չեն կարող մոգական գաւազանի զօրութիւն ունենալ և մի շարժումով վերացնել նրանց:

Եւ երկրորդ՝ գործնական դառն փորձերը Տաճկաստանում ու յետոյ, մանաւանդ, Կովկասում, պարզ ապացուցին, որ առաջարկած խաղաղարար ձեւերը ժամանակաւոր, փոփոգիչ (պալլիատիւ) միջոցներ են և միանգամայն ապարդիւն:

Այստեղ, ուրեմն, հարկաւոր է կանգ առնել մի փոքր: Ժխտել, իհարկէ, չի՛ կարելի, որ թունաւոր դրու-

Թիւնն ու չարահնդիր տրամադրութիւնը դրացի ժողովուրդներէ մէջ՝ հետեանք են բարդ պայմանների: Բայց նոյնքան ճիշտ է և այն, որ տիրող կառավարական ռեժիմը պահպանում է—երբ ուզում է—հաւասարակշռութիւն երկու հակամարտ ժողովուրդների միջև, և պատժի ու պատասխանատուութեան երկիւղով սանձահարում է փոխադարձ կրքերը: Հարկաւոր է կառավարութեան խորթ նայուացքը մի կողմի վրայ և հովանաւորութիւնն ու բարեացակամ արամադրութիւնը դէպի միւս կողմը, և ահա՛ հովանաւորած կողմը—մանաւանդ եթէ տգէտ է նա և երևոյթները ըմբռնելու կարողութիւնից զուրկ,—պատրաստ է նախայարձակ լինելու: Եւ հէնց այս պայթումն է, որ պէտք է յետաձգւի խօսքի ու գրչի միջոցով: Չենք խօսում այդ պայթման իսպառ վերացման մասին. որովհետեւ անկարելի է այդ քանի որ նա հետեանք է որոշ պատճառների, իսկ այդ բարդ պատճառների արմատները ամուր թաղած են անցեալի խորքերում:

—Բայց ի՞նչ օգուտ յետաձգումից, եթէ չի՛ կարելի վերացնել նրան իսպառ:

Ահա՛ թէ ինչ:

—Ժողովուրդների արհեստական թունաւորումը, ներանց կանգնեցնելը մէկը միւսի դէմ՝ կատարում է սովորաբար քաղաքական բարենորոգումների (րեֆորմների) նախօրեակին: Առքի տակից հողը կորցրած տիրող կառավարութիւնը դիմում է գործունէութեան այդ յանցաւոր եղանակին՝ իր անկումը փրկելու, կամ գոնէ յե-

տաձգելու համար, այն յուսով որ կարողանայ առաջ բերել յետադարձ (րեակսիօն) շարժում և, օգուելով իրերի խառնակ գրութիւնից, նորէն ավազնդել իր չարագործ գոյութիւնը: Եւ, եթէ քաղաքական այս փոխանցման շրջանում, հակամարտ ազգերին աջողւի չենթարկել գրգռիչ (պրօփօկասիօն) ազդեցութիւնների, դրանով պիտի արագանայ տիրող ռեժիմի անկումը և նրան փոխարինող նոր, փոքր ի շատե բարեկարգ կառավարութիւնը, իր հերթին, պիտի պահպանէ հաւասարակշռութիւնը լարած ազգերի միջև:

Մնում է վերջին հանգոյցը—այն, թէ՛ հնարաւոր է արդեօք թշնամի ժողովուրդներին, թէկուզ առժամապէս, յետ կասեցնել ազգային ընդհարումից:

Այդ ծանր հարցի դրական լուծումը ըստ երևոյթին դժւարացնում են մօտիկ անցեալի դժբախտ փորձերը: Տաճկաստանում և մանաւանդ Վովկասում եկեղեցու բեմից ու մզկիթներից խաղաղութիւն էին քարոզում, լրագիրները շարունակ յորդորներ էին կարգում, հայ-թրքական խառն յանձնախմբերը (կոմիտիաները) անվերջ ճամբորդում էին, բայց այնուամենայնիւ այդ բոլորն անցան անօգուտ ու ապարդիւն:

Այսպէս պատճառաբանողները երբէք նկատողութիւնից չպիտի փախցնեն, որ Տաճկաստանում մահմէտականները խաղաղասիրական ո՛չ մի քայլ չ'արին, իսկ քրիստոնեայ հայերը այդ ուղղութեամբ չէին վստահանում գործել, որովհետեւ բաժանող վիճը չափազանց մեծ էր և քաղաքական ու ընկերային (սօցիալական)

պայմանները՝ դժոխային: Ինչ վերաբերում է Կովկասին, այնտեղ խաղաղասէրները հրապարակ եկան ընդհարման համաճարակի ընթացքում, երբ արդէն ուշ էր:

Այսպէս թէ այնպէս, ընդհարումից յետ կանգնելու համար՝ ժողովուրդներին հարկաւոր է միայն մի բան— խոր գիտակցութիւն այն մասին, թէ այդ ընդհարումից—նոյն իսկ ուժեղ կողմի համար—ո՛չ միայն ոչ մի շահ չկայ, այլ, ընդհակառակն՝ հետեւանքները աղետալից ու կորստաբեր են բոլոր տեսակէտներով: Գիտակցօրէն այս համոզման դայը թէև անցեալում անկարելիութեան չափ դժուար, անհամեմատ դիւրին պիտի լինի ապագայում, որովհետև նրան նպաստում են մի շարք պայմաններ:

Այդ նպաստաւոր պայմաններն են՝

Ժամանակը՝ իր բնաշրջումին (էվոլյուսիօն) մէջ. գերագիտութեան հետզհետէ ծաւալումը. մամուլի ու գրականութեան զարգացումն ու ժողովրդականացումը. ճանապարհների դիւրին հաղորդակցութեան աստիճանաբար աճումը. նախկին սեփականութեան բարեփոխումը և իբրև հետեւանք այդ բոլոր պայմանների համախըմբման՝ ժողովուրդների մտաւոր հորիզօնի ընդլայնումը՝ իր ընդհանուր առման մէջ. վերջապէս, անցեալի դառն փորձերի վերլուծումը՝ իբրև խրատական դաս:

Բայց ինչ էլ լինի, թէ՛ թժնամուն և՛ թէ բարեկամին յարգանք ու պատկանանք ներշնչողը, դժբախտաբար, դեռ կոպիտ ոյժն է: Եւ մի ազգ—եթէ ուզում է մնալ յարգած, եթէ չի՝ ուզում կորչել—պէտք է լինի զէնքի ընդունակ, միշտ պէտք է լինի կազմ ու պատրաստ ինքնապաշտպանութեան համար, մանաւանդ քաղաքական ցնցումների վայրկեաններում (մօմենտներում):

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

Զանգաճային (մասսայական) կռիւը, նոյն իսկ յառնուն ինքնապաշտպանութեան, լինում է գիտակցական կամ ամբօխային, կազմակերպած կամ հօտային:

Աւազակները, երբ յափշտակում են ոչխարները ամբողջ հօտով, դէպքի վայրից շուտ ու արագ հեռանալու համար՝ հրացան են պարպում օդի մէջ կամ մըկըկացնելով մորթում են մի ուլ և արիւնը սրսկում հօտի մէջ: Այդքանը հերիք է, որ սարսափահար ոչխարները, իրար խոնկած, իրար կոխոտելով, ողջ հօտով փախչեն ուզած ուղղութեամբ այնպէս արագ, որ ձին ետեւից հազիւ հասնի:

Այդպէս է և՛ ամբօխը կռւի միջոցին: Բաւական է մի քանի դիակ կամ հրագէնի մի քանի ճայթիւն, և նա փախուստի է գիմում գլխակորոյս:

Ամբօխը չի՛ հասկանում, որ իր շահը մի մասն է ամբողջի՛ նրա հետ սերտ շաղկապած, և, եթէ ուզում է պահել իր սեփականը, պէտք է պաշտպանի ամբողջը: Ամբօխը չի ըմբռնում, որ համաճարակին և առհասարակ ընդհանուր աղէտին կարելի է դիմագրել միմիայն ընդհանուր ուժերով:

Բայց այդպէս չէ՛ գիտակցական ու կազմակերպւած կռիւր:

Կազմակերպւած ինքնապաշտպան կռիւր ըմբռնում է երևոյթները լայն և պարզօրէն, գիտակցում է իր նըպատակը. նա գիտէ իր ուժերը ճշտիւ և թշնամունը՝ մտաւորապէս. նա կարգի է բերում իր բոլոր ռազմիկ ուժերը և մտցնում է նրանց մէջ կարգապահութիւն (դիսցիպլին): Հարկաւոր դէպքում շարժում է իր զօրամասերը արագօրէն, կենտրոնանում է՝ ուր անհրաժեշտ է, յարձակում է՝ ուր հարկաւոր է, պաշտպանում է՝ ուր կարևոր է:

Կ Ա Ջ Մ Ա Կ Ե Ր Պ Ո Ւ Մ

Ընդհանուր կամոմներ. Քաղաք. Գիւղ. Շրջամ.

ԸՆԴՀ. ԿԱՆՈՆՆԵՐ

Կառավարութեան արգելքներից խուսափելու և իր սեփական ուժերի քանակն ու որակը ապագայ թըշնամուց գաղտնի պահելու համար, հարկաւոր է կազմակերպւել լռելեայն և խորին գաղտնապահութեամբ, առանց ցոյցերի ու ցուցամուտի:

Անհրաժեշտ է, որ ինչպէս կազմակերպւողները, նոյնպէս և կազմակերպողները լինին անպատճառ տեղացիներ: Այս ձևն ունի այն առաւելութիւնը, որ գաղտնապահութիւնը դարձնում է հնարաւոր: Բացի դրանից, կազմակերպութիւնը մի ամբողջացած մէքենայ է, որի կանոնաւոր շարժումը կը խանգարւի՝ եթէ նրանից հանենք թէկուզ մի պտուտակ (վինտ), իսկ դրսից եկած անհատը պատահական անձնաւորութիւն է և միշտ հեռանալու ենթակայ: Ծայրահեղ դէպքում, թոյլատրելի է, որ կազմակերպողը լինի գրսից, իսկ կազմակերպւողը՝ երբէք:

Կազմակերպութիւնը պէտք է լինի գործնական և կենսունակ, որ ամեն պատահարից չբայթայլի: Այդ նը-

պատակին հասնելու համար՝ պէտք է խոյս տալ լայն ծաւալից և ամենախիստ ընտրութեամբ սկզբում կազմել միայն կորիզը՝ յեղափոխական և գիտակից տարրերից:

Հոգ չէ, եթէ այդ կորիզը սկզբում կը լինի փոքր: Դա առաձգական է և վտանգի պահուն մեծանալու ենթակայ: Հարկ չկայ կազմակերպելու համար ընդհանուր հրաւեր կարգալ քաղաքացիներին կամ գիւղացիներին. խաղաղ ժամանակ անիրագործելի է այդ և գաղտնապահութեան տեսակէտից՝ վտանգաւոր: Բացի դրանից, լայն ծաւալով կազմակերպումը ժողովրդի մի մասին ներշնչում է անհիմն երկիւղ, իսկ միւս մասի մէջ առաջ է բերում կուրի տրամադրութիւն: Այդպիսով մտքերը յուզւում են ընդհանրապէս և հեռանում բնական, նօրմալ դրութիւնից,

Խմբի ամեն մի անդամը, առանց բացառութեան, ապրում է իր հաշուով:

Խմբի անդամները գաղտնի քուէարկութեամբ և ձայների $\frac{2}{3}$ -ի մեծամասնութեամբ ընտրում են խմբապետ և նրա օգնականը:

ԺԱՆՕԹ. Ուր $\frac{2}{3}$ -ի մեծամասնութիւն չի կայանում, ընտրելիների ցուցակը ներկայացնում են իրանց շրջանի մարմինն, որը նրանցից երկուսին նշանակում է խմբապետ և օգնական:

Ինքնապաշտպանութեան խմբակները կատարելագործելու են զինավարժութիւնը թիրախի (տիր, ТИРЬ), նշանաձգութեան և որսորդութեան միջոցով:

ԺԱՆՕԹ. Որսորդութեան առանձին տեղ ու նշանակութիւն պէտք է տալ, որովհետեւ որսորդական վարժութիւնն է միայն, որ մարդուն մօտեցնում է պատերազմի արհեստին, ինչպէս օրինակ. - իր վռայ կրել պաշարի ու ռազմամթերքի ծանրութիւնը, քայլել երկար, բարձրա-

նալ լեռը, իջնել ձորը, պտտել ծահիճներում ու անտառներում, վարժել քաղցի ու ծարաւի եւ քնութեան խրստութիւններին, շուտ նշան անելու եւ արագաձգութեան վարժութիւն, սպանելու արհեստ բոլոր ձեւերի մէջ - ինչպէս կանգնած, նոյնպէս փախած ու թռած ժամանակ ամեն ուղղութեամբ, կռիւ գազանների դէմ, կենդանի էակը դիակ դարձնելու սովորութիւն եւ այլն: Որսորդութիւնն ունի եւ մի ուրիշ շատ խոշոր առաւելութիւն, այն՝ որ որսորդը զործում է անկախ եւ ինքնուրոյն, եւ դռանով նրա մէջ զարգանում է հնարագիտութեան ոգին եւ նախածեռնութիւնը (ինիցիատիվան), որ շափազանց կարեւոր է խաղաղ կեանքի մէջ եւ, մասնաւորապէս, պատերազմի ժամանակ:

Ինքնապաշտպանութեան խմբակների մէջ՝ մտնել կարող են միմիայն հրացան կամ ատրճանակ փոքր ի շատէ վարժ արձակողները, իսկ վարկարեկած անհատներ՝ երբէք:

Կրանք, որոնք ունին հակում և յարմարութիւն ինքնապաշտպանութեան խմբերի մէջ մտնելու, բայց անծանօթ են զինավարժութեան, կարող են այդ վարժութիւնը ձեռք բերել կողմնակի կերպով և ապա նոր միայն մտնել ինքնապաշտպանութեան մէջ:

ԺԱՆՕԹ. Այդպիսիներին վարժեցնում է խմբի ձեռնհաս անդամը կամ զինուորական մարզիչը (ինստրուկտորը), նշանակւած նոյն շրջանի ինքնապ. մարմնի կողմից:

Զինուորական մարզիչի դերը առաւելապէս կատարում է ինքնապաշտպանութեան խմբակի ձեռնհաս անդամը նոյն խմբի ընտրութեամբ, կամ յատուկ նըշանակած մի անձնաւորութիւնը ինքնապաշտպանութեան այն մարմնից, որին պատկանում է խումբը:

Ինքնապաշտպանութեան խմբակի իւրաքանչիւր անդամը պէտք է ունենայ իր սեփական զէնքը:

ԺԱՆՕԹ. Ուր որ նիւթականի պատճառով անհնար է այդ, - խումբը նշանակում է անդամակցական հաւասար

ամսավճարները եւ դրանով հետզհետէ ձեռք են ընթրում զէնքերի անդամների թւի համեմատ: Թիւը լիամալուց յետոյ, ընդհանուր համաձայնութեամբ կատարուում է այդ զէնքերի վերազնահատումը առանձին-առանձին՝ ըստ որակի եւ, փոխադարձ համաձայնութեամբ կամ վիճակով, բաժանուում է անդամների վրայ այն հաշուով, որ լաւ զէնք ստացողը վճարում է աւելորդ արժէքը (այսինքն տարբերութիւնը իր մտցրած գումարի եւ զէնքի արժէքի), որը տրուում է հասարակ զէնք ստացողին:

Նախ քան զէնքի բաժանումը՝ իրանից անկախ պատճառով խմբից հեռացող անդամը (մեռնելու դէպքում՝ ժառանգը) ստանում է խմբի դրամարկղից իր մտցրած գումարի 75⁰/₀-ը, իսկ կամաւոր կերպով խմբից դուրս եկողը՝ միայն 50⁰/₀:

Խուզարկութեան վտանգից ազատ մնալու համար՝ խումբը պէտք է ունենայ իր գաղտնաբանը, իսկ ամեն մի անդամ՝ իր սեփականը:

Ամեն խմբակ պատրաստ պահում է իր զէնքի ու ռազմավթերքի և անդամների թւի ցուցակը (առանց անունների) և այդ ցուցակը ներկայացնում է մօտակայ զինւորական սպայակոյտին (Շտաբին), իսկ ուր այդպիսին չկայ՝ Շրջանապետին կամ ինքնապ. տեղ. մարմնին, միմիայն ընդհարման նախանշանների օրերում:

ԺԱՆՕԹ. ա. Բաղաքի ու Թաղի անունը եւ արձանագրութեան թւականը գրուում է ցուցակի ներկայացնելու օրը միայն:

բ. Ցուցակի ձեւը գիւղի համար նոյնն է, ինչ որ քաղաքինը. միայն քաղաքի եւ Թաղի փոխարէն գրելու է գիւղի անունը եւ շրջիկ կամ «Ֆոռաս»՝ խումբն. էլ դուրս է ձգելու, այնտեղ այդպիսին չլինելու պատճառով:

Յ Ո Ւ Յ Ա Կ

ԻՆՔՆԱՊԱՇՏՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՈՅԺԻ

..... քաղաքի Թաղի,

կազմած 19 Թ.

1011-2002 (132-59)

Անդամների Թիւը	Հ ր ա ց ա ն						Ա տ ր ճ ա ն ա կ				
	Մ օ ս ի ն Փամփուս	Մ ս ս ո Վ Ի ր Փամփուս	Ֆ ն ե ր յ ա մ Փամփուս	Փ ս ս փ փ ո ս Փամփուս	Մ ս ս ո Վ Ի ր Փամփուս	Մ ս ս ո Վ Ի ր Փամփուս	Ա յ լ աս ր ան ն ա կ ը ր Փամփուս	Վ աս ո ղ Ա ռ ի ն կ ամ կ ս ս Վ ար
ա.	Մնայուն խումբն ունի.										
.....
բ.	Թռուցիկ խումբն ունի.										
.....
գ.	Ֆոռան խումբն ունի.										
.....
դ.	2ը կազմակերպած ժողովրդի ժող. կայ.										
.....



Ք Ա Ղ Ա Ք

Հայութեան բոլոր երեք գլխաւոր հատուածների մէջ ազգաբնակութիւնը քաղաքներում խառն է: Բացառութիւն կազմում է միայն Նոր-Բայազէտը՝ Վովկասում, որ զուտ հայաբնակ է: Ուրեմն կազմակերպութեան ձեւը այստեղ ցոյց է տրւելու միայն խառն բնակչութիւն ունեցող քաղաքների համար:

Քաղաքը բաժանուում է թաղերի և ամեն մի թաղ կազմակերպում է ինքնապաշտպանութեան մի խումբ:

Խառն թաղի խումբը մնայուն է—կուրի ժամանակ մնում է իր թաղում՝ նրան պաշտպանելու համար անակընկալ յարձակումներից:

Չուտ հայաբնակ կենտրոնական ապահով թաղերը իրանց խմբակները բաժանում են երկու մասի—մնայուն և թռուցիկ:

«Թռուցիկ» խմբակը օգնութեան է վազում ընդհարման կէտը կամ գնում է ուժեղացնելու վտանգաւոր ծայրաթաղը, նայելով պայմաններին, յարմարութիւններին և ստացած հրահանգին:

Մնայուն և թռուցիկ խմբերից զատ՝ կազմակերպուում է ամբողջ քաղաքի համար մի առանձին խումբ՝ կամաւորներից, շրջիկ կամ «Փռուս» անունով: Այս խումբը—երբ զգացւում է ընդհարման վտանգը—բաժանւած մասերի՝ ցերեկները աննկատելի պտտում է բոլոր բազմամարդ վայրերում, ուր ժողովուրդը խառն է, ինչպէս օրինակ՝ շուկայ, հրապարակ, քաղաքային պարտէզ կամ այգի, հասարակաց կշիռ (ղա-

փան) և այլն, որպէս զի անակընկալ ընդհարման րոպէին ցոյց տայ առաջին դիմագրութիւնը և այդպիսով սահմանափակի իր ազգակից զոհերի թիւը: Յեշած կէտերում կարիքն անցնելուց անմիջապէս յետոյ, «Փռուսն» խումբը, դարձեալ բաժանւած մասերի, ցրուում է դէպի քաղաք բերող մեծ ճանապարհները և առհասարակ բոլոր այն տեղերը, ուր անց ու դարձ և շարժում կայ՝ փրկելու իր ազգակիցներին և հարւածելու հակառակ կողմին:

Ընդհարման նախանշանների օրերում խառն շուկայում ամեն-մի հայ խանութ պէտք է ունենայ իր զէնքը և խանութում ծառայող ամեն-մի անհատ, որ պատկանում է ինքնապաշտպանութեան խմբին, իրենը:

ԾԱՆՕԹ. Կոնիւք սկսելուն պէս, խանութի զինւած անհատները դուրս են թողում թշնամուն հարւածելու, իսկ անզէնները խանութը փակում ու քաշում են քաղաքի սպահով մասերը:

Մնայուն, թռուցիկ և Փռուսն խմբերի խմբապետական ընդհանուր ժողովը գաղտնի քւէարկութեամբ և ձայների $\frac{2}{3}$ -ի մեծամասնութեամբ ընտրում է մի «Ժամանակաւոր Զինւորական սպայակոյտ (Շտաբ)», բաղկացած երեք հոգուց:

ԾԱՆՕԹ. Ուր չկան այդքան փորձառու ու կարող մարդիկ, ընտրում են մի հեղինակաւոր հրամանատար և սա՛ իր օգնականը:

Ժամանակաւոր Զինւորական Շտաբը ընդհանուր կապ է պահպանում բոլոր խմբապետների հետ, ցուցակագրում և գաղտնի պահում է ժողովուրդի մարտական ոյժի ցուցակը, հոգ է տանում ժողովրդի զինւորման վրայ «Զէնքի ֆօնդի» (եթէ կայ) և կողմնակի միջոց-

ներով, ուսումնասիրում և հետզհետէ ու աննկատելի ամրացնում է յարմար դիրքերը ապագայ կռիւների համար, ընդհարման նախօրեակում վտանգաւոր տներէց փոխադրել է տալիս քաղաքի ապահով մասերը կռիւ անընդունակ բոլոր անձերն ու արժէքաւոր իրերը և կռիւ նախաշրջանում ղեկավարում է նրան, մինչև իսկական «Զինուորական Շտաբի» կազմակերպումը: Ժամանակաւոր Շտաբի վրայ է ընկնում նոյնպէս, որ կռիւ նախօրեակին յորդորի ժողովրդին ձեռք բերել ուստեստի ու ջրի պաշար և շուկայի վտանգաւոր մասերէց տուն փոխադրել թանկագին ապրանքները, բայց հետզհետէ և աննկատելի կերպով:

Ընդհարման սկզբում՝ ինքնապաշտպանութեան բոլոր ոյժերը ամբողջ թափով պէտք է ընկնեն թշնամու վերայ և անմիջապէս ճնշեն նրան: Իսկ եթէ չի աջողւի այդ արագ ճնշումը և կռիւը կը ստանայ պարբերական յարձակումների բնոյթ, ինքնապաշտպանութեան ոյժերը պէտք է այնուհետև բաժանւին երկու մասի—ցերեկւայ և գիշերւայ համար, որ ամեն մէկը իր կարգին՝ (հերթին) հսկի և պատրաստ լինի դիմադրութեան:

Վտանգի օրերում բոլոր թաղերը վարձում են գիշերային պահապաններ կարիքի համեմատ:

Գիշերային պահապաններ վարձում են նաև վաճառականները՝ շուկայի համար:

ԺԱՆՕԹ. Չմերային ցուրտ ու երկար գիշերների համար պահապանների թիւը պէտք է լինի կրկնակի՝ երկու հերթի բաժանելու համար—մինչև կէս-գիշեր և կէս-գիշերից մինչև լոյս:

Պահապաններին միշտ կօնտրօլի տակ պահելու համար՝ վարձում է մի խմբապետ երկու օգնականով՝ որոնցից մէկը հսկում է մինչև կէս-գիշեր, իսկ միւսը կէս-գիշերից յետոյ՝ մինչև լոյս:

Կռիւ օրերում քաղաքի բոլոր մասերում, բացի վրտանգի ենթակայ տներից, յարբասները (բակի դռները) միշտ պիտի լինին բաց, որպէս զի ժողովուրդը հեշտութեամբ ու արագ խուսափի թշնամու գնդակներից և կռուողներն էլ՝ զօրքի ու ոստիկանութեան հետապնդումից:

ԺԱՆՕԹ. Սովորաբար տները շինում են երկու դուրսնունդով փողոցի մէջ տեղը և դարբասը գտնւում է այս կամ այն փողոցի վրայ: Շատ ցանկալի և խիստ օգտակար է, որ ամեն-մի տուն ունենայ (նոր շինի) անցք կամ դռնակ նաև հակառակ փողոցի վրայ, որպէս զի դարբասով ներս մտնող կարողանայ այդ անցքից կամ դռնակից անցնել միւս փողոցը և այդպիսով հետքը կորցնել հետապնդող զօրքից կամ ոստիկանութիւնից:

Կռիւ օրերում պէտք է խստիւ արգելել անպէն մարդկանց՝ «թամաշա» անողների, անպատակ անց ու դարձը և շարժումը փողոցներում: Կրանք մտցնում են ինքնապաշտպանութեան գործի մէջ միայն շփոթութիւն ու իրարանցում և տալիս են անօգուտ զոհեր:

Քաղաքի ինքնապաշտպանութեան գործը պէտք է կապւած լինի շրջակայ հայ գիւղերի հետ՝ փոխադարձ օգնութեան համար:

Շրջակայ գիւղերը կռիւ ժամանակ կարող են օգնական խմբեր ուղարկել բաղաբ, բայց նրանց գլխաւոր գործը պէտք է լինի՝ փակել ճանապարհները դրսից բաղաբ մտնող թշնամի օգնական ոյժերի առաջ:

Պաղ զէնքի—գաշոյնի և դաշոյնանման դանակի գործածութիւնը հնարաւոր է երեք դէպքում.

ա.) Երբ հարկաւոր է անակընկալ յարձակում գործել թշնամու վրայ բազմամարդ վայրերում, ինչպէս օրինակ՝ շուկայ, հրապարակ և այլն: Քանի որ պաղ զէնքը ձայն չի հանում հրագէնի նման և այդ պատճառով էլ դէպքի վայրը մի առժամանակ մնում է ուշադրութիւնից դուրս,

ինչպէս թշնամի օգնական ոյժերի, նոյնպէս և զօրքի համար, ուստի պաղ զէնքը հնարաւորութիւն է տալիս՝ նիւթելու թշնամի խուժանների մէջ լռիկ ու սոսկալի կոտորած:

բ.) Անհատական սպանութիւնների ժամանակ.

և գ.) Գիմագրութիւն ներսից՝ թշնամին տուն խուժելու միջոցին—պաղ զէնքը շարունակ առաջ ու հետ շարժելով՝ հօրիզօնական ուղղութեամբ՝ դռան կից պատի յետևից:

Կուրի ընթացքում հակառակորդին մօտիկ գտնւող տնիւրը պէտք է գիշերը հանգցնեն ճրագները կամ ծածկեն լուսամուտները, որ լոյսը և լոյսի տակ երևացող մարդիկ իրանց վրայ չհրաւիրեն թշնամու գընդակները:

Կուրի օրերում Զինւորական Շտաբը կամ հրամանատարը իր ստորագրութեամբ առժամայէս զէնքերը հաւաքում է կուրի անընդունակ ժողովրդից և բաժանում կուրի ընդունակ անձերին:

Յանկարծակի թաղը ներս խուժող հակառակորդ ամբօխի գլխին՝ աների բարձր յարկերի լուսամուտներից պէտք է թափել ամեն բան, ինչ որ ձեռք կ'անցնի, ինչպէս օրինակ—քար, աղիւս, աթոռներ, երկաթէ իրեր մօխի, եռացրած ջուր, թթւուտ (*acide, кислота*) և այլն, որպէս զի դանդաղութեան մատնելի թշնամու յառաջխաղացքը, մինչև թռուցիկ խմբերի օգնութեան հասնելը:

Որումբի արդիւնաւէտ գործածութիւնը հնարաւոր ու նպատակայարմար է միայն երկու դէպքում.

ա.) Ներս խուժող թշնամի ամբօխի վրայ ծայրաթաղերի փողոցներում՝ անկիւնի տներից.

և բ.) Չեռքի թեթև ուղւորը՝ թշնամուն իր ամուր գիրքից դուրս վանելու համար:

Բայց երկու դէպքումն էլ ուղւորը պէտք է գտնել գործը հասկացող և փորձած ձեռքերում:

Ծանօթ. Թշնամուն իր դիրքից դուրս քշելու համար՝ լաւագոյն միջոց է նաև դիրքի հողեհումը, եթէ այնտեղ դիրաւատ նիւթեր կան:


ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՐՔԵՐ

Գիրքը միաժամանակ ծառայում է երկու նպատակի—պաշտպանել թշնամու գնդակից և այդ պաշտպանւած տեղից հարւածել հակառակորդին: Լաւագոյն դիրքը, անշուշտ, այն է, որ իշխում է շրջակայքի վերայ: Իշխող կամ տիրապետող կոչւում է այն բարձր դիրքը, որտեղից կարելի է գործել մեծ տարածութեան վրայ: Գաշտի վրայ բարձրացած լեռը կամ բլուրը, օրինակ, իշխող դիրք է: Բայց սխալ է և թիրիմացութիւն, որ քաղաքում ամեն-մի բարձր կամ թէկուզ ամենաբարձր տունը մարդիկ համարում են իշխող: Փողոցի լայնութեան այս կամ այն կողմի վրայ շինւած տունը, ինչքան էլ բարձր լինի, —տիրապետող չէ: Այդպիսի տան բարձունքից կարելի է տեսնել և գործել միայն իր առաջը ձգող փողոցի լայնութեամբ և ամենաշատը՝ դրա վրայ կաւելանայ մի ուրիշ՝ հարևան փողոցի փոքրագոյն մասը: Սինչդեռ փողոցի երկայնութեան ճակատի վրայ գտնւող տունը, որքան էլ ցածր լինի, եպպէս իշխող է, որովհետև այնտեղից կարելի է պարզ տեսնել և ազատօրէն արձակել փողոցի ամբողջ

երկարութեամբ: Բայց կայ աւելի յարմարագոյնը: Գա խաչաձև իրար կտրող երկու փողոցի միացման կէտն է, ուր կազմուում է չորս անկիւն և որտեղից հնարաւոր է դառնում հրացան արձակել ո՛չ թէ մէկ, այլ երկու փողոցի երկարութեամբ: Ճիշտ է, անկիւնում՝ բաց փողոցի վրայ, կուռղը ինքնապաշտպանութեան համար լաւ պատսպարւած չէ՝—կառավարութիւնն էլ հազիւ թէ թող տայ շինել պատնէշներ (բարրիկադներ)—բայց ամենեին դժւար չէ՝ հողով լցւած երկու սոպորակ կամ մի քանի բար դնել իրարու վրայ և պակել նրանց ետևը: Տափարակի վրայ պառկած, չոքած կամ կանգնած գիրքով հրացանաձգութիւնը ունի և ա՛յն առաւելութիւնը, որ հօրիզօնական ուղղութեամբ սլացող գնդակը—եթէ շեղւի էլ կէտնպատակից, որ շատ սովորական է,—նորէն իր երկար ճանապարհին կարող է հանդիպել ուրիշ թշնամի անձերիս Մինչդեռ բարձունքից դէպի ցած արձակւող և թեք ուղղութեամբ թըռչող գնդակը կէտնպատակից շեղւելով մտուում է գետնի մէջ ապարդիւն:

Ուրեմն լաւագոյն զիրքը քաղաքում փողոցի երկայնութեան ճակատի վրայ գտնւող տունն է և, մանաւանդ, խաչաձև իրար կտրող փողոցների անկիւնները: Ըստ կարելոյն՝ պէտք է խուսափել բարձր տներից, մանաւանդ գիշեր ժամանակ: Խաւարի մէջ և լուսնի լոյսի տակ ցածից դէպի վեր տեսնւում է շատ հեշտ, մինչդեռ բարձրում գտնւող մարդը ոչինչ չէ՝ նկատում վարը: Այդ է պատճառը, որ գիշերային վտանգաւոր ճանապարհորդութեան ժամանակ, փորձառու ճամբորդը երբեմն-երբեմն կուսնում կամ նոյն իսկ պառկում է գետնի վրայից դէպի հեռուն նայելու համար:

ԾԱՆՕԹ. Միւս երեսում գետնուած է քաղաքային դիրքերին վերաբերեալ էսկիզը (նկարը) նւրա բացատրութիւնը:



Այս նկարից պարզ երևում է, որ երեք տեղ փողոցները իրար կտրում են խաչաձև և կազմում են երեք քառանկիւն— ա, է, ը, Այստեղ վերցրած է իբրև դիրք «Ա» կէտը՝ իր չորս անկիւնով։ Ուշադրութեամբ դիտողն իսկոյն կը նկատի, որ «Ա» կէտից անարգել կարելի է արձակել մինչև «Գ» ու «Դ» և «Ե» ու «Զ», այսինքն երկու փողոցների ամբողջ երկարութեամբ։

Իսկ փողոցի ճակատի տունը, եթէ վերցնենք «Գ», հնարաւորութիւն է տալիս արձակել մինչև «Դ», այսինքն մի փողոցի երկարութեամբ միայն։

Մինչդեռ փողոցի լայնութեան վրայ գտնուող տունը, օրինակ, «Խ», թող կը տայ արձակել «Ժ»-ի ուղղութեամբ, որ կազմում է փողոցի լայնութիւնը և գուցէ այնտեղից կը նշմարին մի քանի փոքրիկ կէտեր ևս հեռաւոր փողոցներում, այն էլ եթէ արգելք չլինեն շրջակայ շինութիւնները։

Ընթերցողների ուշադրութիւնը հրաւիրում է և՛ մի ուրիշ շատ կարևոր հանգամանքի վրայ, թէև յարմար է կանգնել և կուել մեր ընդունած դիրքի չորս անկիւնների կենտրոնում, այսինքն ճիշտ այն կէտի վրայ, որ նշանակած է Ա տառով, բայց ենթագրելով որ կառավարութիւնը թող չի՛ տայ շինել այնտեղ պատնէշներ, բարիկաղներ և գուցէ ժամանակն ու պայմաններն էլ չեն ների, որ կուողները, իբրև դիրք, իրար վրայ դնեն մի քանի բար կամ հողով լիբը սոպրակի, ուրեմն նրանք ամբողջ մարմնով կը մնան բաց ու անպատասպար տարածութեան վրայ և ենթակայ սպանելու վտանգին։ Այդ անհաճոյ գրութիւնից դուրս գալու համար, պէտք է ընտրել՝ իբրև պատրաստի դիրք, փողոցի չորս անկիւնը— 1, 2, 3, և 4։

Նկարը նորից դիտեցէք ուշադրութեամբ. դէպի «Գ» արձակելու համար պէտք է կանգնել անկիւն «1»-ում,

դէպի «Զ» — անկիւն «2»-ում և այլն։ Կէտանշանները (-----) նկարի վրայ ցոյց են տալիս կուողի կանգնելու տեղը և գնդակի ուղղութիւնը։ Որովհետև հրացանաձգութեան ժամանակ անհրաժեշտ է աջ ուսը հրացանի կոթի համար և աջ աչքը՝ նշան առնելու համար, այդ պատճառով էլ պէտք է ընտրել այն անկիւնը, որը հնարաւորութիւն է տալիս դուրս հանել պատի ետևից մարմնի միայն այդ մասերը։ Դրանով նշանը լծշնամու գնդակի առջ փոքրանում է մինչև *minimum* և սպանելու վտանգը գրեթէ վերանում։

ԸՆԴՀ. ՊԱՏԿԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԻ

Ենթագրելով՝ որ նախապատրաստական շրջանում ինքնապաշտպանութեան գործը լաւ կազմակերպած և ամեն ինչ խնամքով կարգի է բերւած, վերը մատնանշած հրահանգների համաձայն, որ ժողովուրդը ընդհարման նշանների օրերում ընտանիքներն ու ապրանքը փոխադրել է արդէն քաղաքի ապահով մասերը և հոգացել իր կենսական մթերքների պաշարը, որ ինքնապաշտպանութեան խմբակները կազմ ու պատրաստ են և պարզ գիտակցում են իրանց բոլոր անելիքը— կ'ստացուի առաջին կուի հետևեալ ամփոփ պատկերը—

Շուկայում, հրապարակում կամ մի այլ նման տեղում— ուր միշտ սկիզբն է առնում կուիւր— լծշնամին որ և է առիթով սկսում է կոտորածը։ Այդ բայիօնում շրջող «Քոռան» խումբը անմիջապէս ցոյց է տալիս

առաջին եռանդուն դիմադրութիւնը: Իսկոյն, սրանց օգնութեան են հասնում զինւած անձեր շրջակայ խանութներից ու այլ տեղերից: Մինչդեռ սրանք միացեալ ոյժերով հարւածում են թշնամուն, անղէնները կողպում են խանութ ու գրասենեակ և շտապով հեռանում քաղաքի ապահով մասերը: Շարունակող հրացանաձգութեան ձայնը տարածւում և լսւում է քաղաքի միւս մասերում: Այնտեղ հասկանում են, որ սկսած է կռիւը և անմիջապէս դիմում են զէնքի: Որանք, առանց ժամանակ կորցնելու, գերում կամ փախցնում են հայկական մասերում և թաղերի սահմաններում գտնուող հակառակորդներին: Կարճ ժամանակից յետոյ փողոցները և ընդհարման կէտերը մաքրւում են երկու անգէն ժողովուրդներից և ասպարէզի վրայ մնում են յաղթող կուռղները: Գրանից յետոյ «Իռւանին» օգնութեան եկած անհատները քաշւում են դէպի հայկական սահմանները, իսկ ինքը՝ խումբը, մասերի բաժանւած՝ վազում է դէպի քաղաքի շրջակայքը և մեծ ճանապարհները: Այդ բոլորի հետ զուգընթաց՝ Մնայուն ու Թուռցիկ խմբերը անյապազ գրաւում են իրանց համար նախորոշած գիրքերը: Այդտեղից նրանք շարունակում են իրանց գործը, եթէ դեռ ևս չի՝ դադարել կռիւը: Կռիւը դադարելուց յետոյ ոյժերի մի մասը վերագառնում են իրենց տները հանգստանալու՝ գիշերւայ փոխարինութեան համար: Գիշերը, կուռղ հերթական խմբերից բացի, իրենց պօստում կանգնում են և՛ պահապաններն ու նրանց վրայ հսկողները: Այսպիսով քաղաքը վերածւում է մի կուռղ բանակի, որին թշնամին չի՝ կարող մօտենալ անպատիժ: Եւ այս զինադադարի միջոցին է, որ ծրագրւում է յարձակումն, եթէ կարիք կայ դրան և որի մասին խօսք կը լինի յետոյ:

Գ Ի Ի Ղ

Մենք ունինք ընդամենը երեք դասի (կօտեգօրիա) գիւղեր:

ա., Զուտ հայաբնակ գիւղ՝ հայկական շրջանում.

բ., Զուտ հայաբնակ գիւղ՝ մենակ ընկած օտար շրջանում.

և գ., խառն ազգաբնակչութիւն ունեցող գիւղ, ուր ապրում են նա՛և հայեր:

Ինքնապաշտպանութեան կազմակերպումը բոլոր կարգի գիւղերում միևնոյն է: Ամեն գիւղ կազմում է մի խումբ, որի մէջ մտնում են բոլոր մարտական ուժերը:

ԺԱՆՕԹ. Շատ մեծ զիւղերը կարող են կազմակերպել մի քանի խումբ—քաղաքի նման թաղական սիստեմով:

Ամեն-մի խումբ բաժանւում է երկու մասի—Մ ըն ա յ ու ն և Թ ո ու ց ի կ:

ԺԱՆՕԹ. Ինչպէս խառն, նոյնպէս եւ զուտ հայաբնակ, բայց օտար շրջանում մենակ ընկած հայկական գիւղերի խմբերը չեն բաժանւում երկուսի եւ միշտ մնայուն են, որովհետեւ նրանց աշխարհագրական դիրքը աւելի աննպաստ է եւ կարիք ունի մնայուն աւելի մեծ ոյժերի:

Մնայուն խումբն ունի իր ընտրովի խմբապետն ու օգնականը և Թուռցիկն էլ՝ իրենը:

Ամեն-մի գիւղի Մնայուն և Թուռցիկ խմբերն ընտրում են և՛ մի ուրիշ աւելի փորձառու ընդհանուր խմբապետ՝ «Գ Ի Լ Ղ ա կ ա ն խ մ բ ա պ ե տ», անունով:

Գ Ի Լ Ղ ա կ ա ն խ մ բ ա պ ե տ ի ն են ինթարկում գիւղի բոլոր մարտական ուժերը և ինքնապաշտպանա-

կան գործերը և նա համարուում է Հրջանապետի օգնականը կամ Զինւորական Շտաբի ներկայացուցիչը:

Միևնոյն շրջանում գտնուող բոլոր «գիւղական խմբապետները» ժողովում և ընտրում են «Ժամանակաւոր Զինւորական Շտաբ»՝ բաղկացած երեք հոգուց:

ԺԱՆՕԹ. Ուր չկան այդքան ծեռնհաս մարդիկ, ընտրում են մի Երջանապետ եւ սա՛ իր օգնականը:

Հրջանային Ժամանակաւոր Զինւորական Շտաբի կամ Հրջանապետի պարտականութիւններն ու իրաւունքները նոյնն են, ինչ որ քաղաքիներ:

ԺԱՆՕԹ. Ընդհարման ծանր օրերում, եթէ հանդէս է գալիս այս կամ այն յեղափոխական ուժեղ կուսակցութիւնը — աւելի լաւ կազմակերպւած ու առաւել փորձառու ղեկավարներով — կուրի գլխաւոր ղեկավարութիւնը յիմնուում է այդպիսի կուսակցութեանը եւ ինքնապաշտպանութեան բոլոր մարմինները մտաւով իրանց պաշտօնում ու դերի մէջ՝ նմարկում են այդ Գերագոյն Ոյժի ընդհանուր ղեկավարութեանը:

Շտաբը կամ Հրջանապետը ընդհարման նախօրեակին իր ստորագրութեամբ ու պատասխանատուութեամբ հաւաքում է զէնքերը կուրի անընդունակ ժողովրդից և բաժանում է ընդունակներին:

ԺԱՆՕԹ. ա. Կարիքն անցնելուց յետոյ՝ զէնքը վերադարձում է իր տիրոջ:

բ. Կուրի մէջ սպանւածի կամ վիրաւորի վերայից թշնամու ձեռքն ընկած զէնքի արժէքը վճարում է ամբողջ գիւղը:

գ. Թշնամուց խլած զէնքը պատկանում է խողին կամ խողներին:

Մօտիկ շրջանները իրար հետ կապ են հաստատում՝ փոխադարձ օգնութեան համար:

ԺԱՆՕԹ. Յարաբերութիւնների համար չպէտք է բաւականանալ երկաթուղային ու փոստային ծանաւարհներով, որոնք հեշտութեամբ կարող են խանգարել կուրի դէպքում. այլ պէտք է որոնել ուրիշ լեռնային կամ դաշտային ծանաւարհներ, որոնք կարող են կառավարութեան ու թշնամու ուշադրութիւնից վրիպել:

Յարձակման ենթարկւած գիւղը իսկոյն սուրհանգակներ է ուղարկում դէպի հարեան գիւղերը՝ օգնութիւն խնդրելու համար:

ԺԱՆՕԹ. Մօտիկ գիւղը հրացանների ձայնը լսելուն պէս՝ օգնութեան է ուղարկում իր թուօցիկ խումբը եւ միաժամանակ իր սուրհանգակների միջոցով հաւաք է ձգում շրջակայ միւս գիւղերը:

Ինչպէս խառն գիւղերում — ուր հայերը կազմում են փոքրամասնութիւն ու ժամանակին չեն կարող ստանալ օժանդակ ոյժեր միւս հայ-գիւղերից, — նոյնպէս և՛ օտար շրջանում մեն-մենակ ընկած զուտ հայաբնակ գիւղերի բնակիչները կուրի նախօրեակին իրանց շարժական գոյքով փոխադրւում են հայկական շրջանները, իսկ անշարժ կայքերի ապահովութեան պատասխանատուութիւնը թողնում են հարեանների վրայ, կառավարութեան միջոցով:

ԺԱՆՕԹ. Այն գիւղերը, որոնք ապրում են խառն կամ կողք-կողքի, թէեւ օտար, բայց չ'ընդհարուող ժողովուրդի հետ, նրանց դրութիւնը միանգամայն ապահով է եւ այս յօդւածը, ուրեմա, չի վերաբերում այդպիսիներին:

Խառն գիւղերում, ուր հակառակորդները հայերի համեմատութեամբ կազմում են փոքրամասնութիւն և չեն փախչում ընդհարման նախանշանների օրերում, պէտք է ընդհանուր կուրի ընթացքում պահել նրանց պատանդ, իբրև սպանալիք, և կամ թէ անվնաս բռնորին Կուրս հանել գիւղից, նայելով թէ ի՞նչպէս է

վարուժմ թշնամին համանման դէպքերում հայերի հետ և ի՞նչպէս է վերաբերում կառավարութիւնը այդպիսի ա կ տ ե ռ ի ն:

ԺԱՆՕԹ. Ոչ մի դէպքում թոյլ չպէտք է տալ որ նըրանք զիւղում մասն ընդունին ազատ, որպէս զի չլըռտեսնն ճայերի ոյժն ու շարժումը եւ լըր տան թշնամուն:

Անհրաժեշտ է լրտեսների միջոցով ուսումնասիրել թշնամու մտաւոր ոյժը և նրա շարժումներն ու յարձակման ծրագիրը:

ԺԱՆՕԹ. Որովհետեւ զործնականապէս չափազանց դժւար է այդ—ուստի պէտք է առանձին ուշադրութիւն դարձնել գոնէ արտաքին երեւոյթների վրայ եւ նրանցից եզրակացութիւններ հանել: Այսպէս օրինակ.—եթէ մօտակայ հակառակորդ զիւղը հեռացնում է կանանց ու երեխաներին եւ փոխաբէնը մտնում են այդ մարդիկ դրսից,—կը նշանակի պատրաստում է յարձակում: Իսկ եթէ հեռացնում են ընտանիքներն ու արժէքաւոր շարժական կայքը եւ նոր (ուրիշ) մարդիկ չեն երեւում զիւղում,—դա արդէն վախի նշան է եւ զգուշութեան միջոց:

Ազգային ընդհարման ընթացքում դաշտային աշխատանքը գիւղերում դառնում է չափազանց վտանգաւոր: Եւ որպէս զի այդ աշխատանքը չդադարի ու աւաջ չգայ տնտեսական բայքայում,—անհրաժեշտ է այդ աշխատանքներին տալ համայնական բնաւորութիւն՝ Թուրքիկ խմբի հսկողութեան տակ:

ԺԱՆՕԹ. Գիւղից հեռու դաշտային աշխատանքները զիւղացիք հաւաքաբար կատարում են հերթով այսօր մէկի, վաղը՝ միւսի համար եւ այսպէս շարունակ: Իսկ այդ միջոցին թուրքիկ խումբը նախապէս զրաւելով չըր ջակայ յարմար դիրքերը՝ հսկում է աշխատաւորների ապահովութեանը:

ԺԱՆՕԹ. Թուրքիկ խումբը այդ հսկողութեան համար վարձատրութիւն չի ստանում, միայն նրան պատկանող անդամների դաշտային աշխատանքները ձրի կատարում են զիւղացիք հերթով:

Որովհետեւ ջրաղացները և անտառները սովորաբար գտնուում են գիւղից հեռու և կուր ընթացքում ջրաղաց ու անտառ գնալը դառնում է անհնարին, ուստի հարկաւոր է նախօրօք պատրաստել ալիւրի և վառելափայտի պաշարը: Առանձին հոգ պէտք է տանել նա՛և աղբիւրի կամ առուի ապահովութեան վրայ, որ թըրշնամին չը կտրի նրանց կուր ժամանակ, կամ պատրաստ ունենալ ջրհորներ ու ջրամբարներ:

Գ Ի Բ Ք Ե Բ

„Մնայուն խումբը“ միշտ պէտք է պահի իր ձեւքում գիւղին մօտ գտնուող բարձրագոյն դիրքը: Եւ եթէ այդ դիրքը հողաբլուր է (և ո՛չ թէ ժայռ կամ բար), պէտք է իշխող բարձրութեան վրայ կատարել փորլածքներ բաւականաչափ լայն և մի կանգունի չափ խորութեամբ, որ կարելի լինի մէջը ազատ տեղաւորել նստած դիրքով և հարկաւոր դէպքում կուրել այդ ձեւով:

Եթէ շրջակայ բնական դիրքերը փոքր ինչ հեռու են և այնպէս են դասաւորւած, որ թշնամին կարող է „Մնայուն խմբի“ գրաւած իշխող դիրքը կտրել գիւղից և չեղդբացնել,—պէտք է բաց անել մի խրամատ, գիւղից մինչև այդ դիրքը, որ յարաբերութիւններն ու պաշարի հայթհայթումը ապահով կատարելի խրամատի միջով:

Եթէ բնական կամ ձեռնադրուած անտառ կայ գիւղի պատերին հասած, պէտք է կտրուել նրան 70-80 քայլի տարածութեամբ, որ անտառի և գիւղի միջև մնայ որոշ դատարկ տարածութիւն՝ թշնամու առաջխաղացքը դժուարացնելու համար:

Եթէ գիւղը շրջապատուած է բարձր պատեր ունեցող այգիներով թշնամին հնարաւորութիւն է ստանում, պատից պատ անցնելով, բոլորովին մօտենալ գիւղին: Եւ որովհետեւ այդ պատերը քանդելն ու հողին հասարացնելը պահանջում է մեծ աշխատանք ու երկար ժամանակ և, բացի այդ, դրանով առաջ է գալիս տնտեսական խոշոր վնաս, — ուստի ո՛չ թէ պէտք է քանդել նրանց, այլ պէտք է գիւղի ծայրում, այգիների ուղղութեամբ, կանգնեցնել մի աշտարակ 10-15 կանգուն բարձրութեամբ: Անձրևից ու կարկտից, ցըրտից ու արևից պաշտպանելու համար՝ աշտարակի գլուխը պէտք է լինի ծածկուած և վերին մասը փոքրիկ բացուածքներ պիտի ունենայ՝ հրացանաձգութեան համար: Նրանից զատ, վերին մասում, կատարից երեք կանգուն ցած, անում է տախտակամած և այսպիսով ստացում է սենեկանման մի բան, ուր ապրում են հերթապահ կուռղները: Այդ բարձրութիւնից հնարաւոր է դառնում թշնամուն ազատորէն նկատել ցանկապատի ետևում և խփել նրան ամենայն աջողութեամբ:

Այդ հարման նախօրեակին գիւղի ամեն-մի փողոցի մուտքի վրայ, երկու հանդիպակաց պատերի տակ, պէտք է կանգնեցնել երկու հողաբլուր այն հաշուով, որ գրանց արանքով անարգել անց ու դարձ անեն սայլերը, խաղաղ ժամանակ: Կուռի միջոցին այդ հողաբլուրների վերին մասերը իսկոյն պէտք է քանդել և թափել երկուսի միջև գտնուած դատարկ տարածութեան վրայ, որ ստացւի մի ամբողջացած հողապատ

1-2 քայլ բարձրութեամբ: Այդ հողապատերը ունին երկու նպատակ.

Ն ա խ՝ նրանց ետևը, իբրև ապահով դիրք, տեղաւորում են կուռղները. և երկրորդ՝ գրանք դժուարացնում են թշնամու գրոհն ու մուտքը գիւղի մէջ, մանաւանդ ձիււորներինը:

Բացի վերը յիշածներից, պէտք է դիրքերի վերածել և գիւղի ծայրերի բոլոր այն տները, որոնք իրանց դիրքով յարմար կը նկատւին կուռի տեսակէտից:

ԾԱՆՕԹ. Դիրքերը շինուում ու ամրացուում են բոլոր գիւղացիների հաւաքական աշխատանքով:

Կուռի օրերում ամեն-մի գիւղ անակընկալ յարձակումներից ազատ մնալու համար՝ հերթով դուրս է հանում բաւարար թւով գիշերային զինուած պահապաններ, որոնց մի մասը գրաւում է գիւղի մուտքերը, իսկ միւս մասը պառոտներ է գործում գիւղի շուրջը:

Շ Ր Զ Ա Ն

Գիւղերի կազմակերպումով լրանում է և գիւղախումբի—այսինքն շրջանի կազմակերպումը: Արդէն ցոյց է տրւած, թէ կուռի դէպքում ի՞նչ պէտք է անի ամեն-մի գիւղ ինչպէս իր, նոյնպէս և հարևանների վերաբերմամբ: Բայց դեռ չի ասուած, թէ ի՞նչ է շրջանի հաւաքական դերը թէ՛ իր և՛ թէ՛ գրացի շրջանի ներկատմամբ:

Որովհետև այդ դերը սերտ կապ ունի յարձակողական և պաշտպանողական կռիւների բնաւորութեան հետ, ուստի անցնենք այս հարցի լուսաբանութեանը:

ՅԱՐԶԱԿՈՂԱԿԱՆ ԵՒ ՊԱՇՏՊԱՆՈՂԱԿԱՆ ԿՈՒՒՆԵՒՐ

Յարձակողական կուիւ չը պէտք է այստեղ հասկանալ ընթացիկ պատերազմական իմաստով: Յարձակողական կուիւ ժողովուրդների ընդհարման գործում ռազմական պայմանները շահագործող մի ձև է, որի անմիջական նպատակն է ինքն ապաշտպանութեան ապահովումը:

Եւ ո՛վ որ կարծում է, թէ այդ ապահովումը կարելի է ձեռք բերել՝ միշտ մնալով պաշտպանողական սահմաններում, նա չարաչար սխալում է:

Պաշտպանողական սահմաններում ապահով մնալու համար հարկաւոր է, որ յարձակման ենթարկւող կողմը ընդհարման բոլոր կէտերում լինի թուով աւելի՝ քան հակառակորդը, որակով՝ բարձր և ունենայ աւելի շատ ու կատարելագործւած զէնքեր և առատ ռազմավթերք: Բայց որովհետև բոլոր կէտերում անկարելի է ունենալ այդ առաւելութիւնները, — ուստի անհրաժեշտ է դառնում որոնել կուի համար ուրիշ «ւելի նպատակաշարմար գործելակերպ (տակտիկ):

Այդ տակտիկի մտակայ նպատակը պէտք է լինի բոլոր յարակից կէտերում թշնամուն պահել անակընկալ յարձակումների մշտական երկիւղի մէջ, որպէս զի նրանք ստիպւած լինին մնալ իրանց տեղերում և չը կարողանան համախմբել ու կենտրոնացած ոյժով խփել հայկական այս կամ այն շրջանին, կամ սրա մի մասին: Իսկ եթէ թշնամուն աջողւի էլ յարձակել ու ենթարկել որոշ վնասի հայկական այս կամ այն մասը — և անպատճառ կ'աջողւի, որովհետև նա միշտ կը գտնի թոյլ կէտեր — պէտք է փոխարէնը անպատճառ

հատուցանել անյապաղ, որպէս զի նա չխրախուսւի անպատիժ յաղթութիւնից և չ'անի նորանոր բայլեր:

Այստեղից պարզ երևում է, որ երկու դէպքումն էլ հակաշարձակումը դառնում է հրամայական:

Բայց շատ լուրջ և չափազանց էական հարց է, թէ ու՞մ վրայ պէտք է կատարել հակա-շարձակումը — յանցաւոր մասի, թէ առհասարակ թշնամու որ և է մասի վրայ:

Հարցին նայելով արգարութեան տեսակէտից, ոչ որ ի հարկէ չի՛ ասի, թէ մեղաւորի փոխարէն պէտք է սուստի անմեղը և ամենքը կը գան միմիայն մի եզրակացութեան — որ պատիժը պէտք է կրի յանցաւորը:

Բայց ի՞նչ կը լինի դրա հետեանքը:

Ֆիզիքական օրէնքով՝ ոյժը միշտ ուղղւում է դէպի ա՛յն կողմը, ուր թոյլ է դիմագրութիւնը: Եւ այսպէս, բնական այս օրէնքի համաձայն, թշնամին սխտեմատիկ կերպով կենտրոնացած ոյժերով յարձակման է ենթարկում այսօր հայոց այս ինչ թոյլ կէտը, վաղն՝ այն ինչ և այսպէս շարունակ: Ու անվերջ կոտորած և միշտ անպատիժ:

Բայց հարցը և նրա հետեանքները հիմնովին կը փոխւին, եթէ թշնամի ազգի վրայ մենք նայենք իբրև մի ամբողջութեան վրայ: Հէնց այդպէս էլ պէտք է նայել, որովհետև ազգային ընդհարման ժամանակ ամբողջ ցեղն ստանում է կուռղ բանակի բնաւորութիւն: Եւ ո՛վ կարող է ասել, թէ կուռղ բանակի մէջ կայ անպարտ զօրամաս: Եթէ որ և իցէ զօրամասի համար դեռ ևս չի ներկայացել ընդհարելու առիթ, դա տակաւին գրաւական չէ, որ նա տրամադրւած է բարեկամօրէն, և առաջին յարմար դէպքում՝ իրան թոյլ չի տայ թշնամուն յատուկ բոլոր բայլերը:

Պարզ է, ուրեմն, որ հակամարտ ցեղը կամ ազգը

կուրի պահանջներն մի անբաժան ամբողջութիւն է և նրա ամեն-մի մասը մեզ համար թշնամի:

Հարածեղ թշնամու այս կամ այն մասին—կը նը- շանակի թուլացնել նրա ամբողջութիւնը: Եւ ինչքան յաճախ ու արագ կատարւին այդ տկարացումները, այնքան աւելի շուտ քայքայման կը մատնւի ամբող- ջութիւնը, որի համար պարտութիւնը կը դառնայ ան- խուսափելի և հետեանքը խաղաղացում, ինչ որ մեր ձգտումների վերջնական նպատակն է:

Երևի կը գտնւին մարդիկ, որ գործունէութեան այս եղանակը կը համարեն վտանգաւոր, մտածելով որ գոր- ծողութիւնների այս ձևը թշնամուն կարող է ծառայել իբրև դաս և նա էլ կսկսի իր կորստաբեր յարձա- կումները մեր թոյլ կէտերի վրայ:

Թշնամին ամենեւին կարիք չ'ունի այդպիսի դասերի, և մենք ինքներս պիտի սովորենք նրանից:

Վովկասի հայ-թաթարական ընդհարումների ժամա- նակ թշնամին իր առաջին ջարդը տուաւ Բագւին, ուր հայերը մի բուռն են այդ քաղաքի և շրջակայ թա- թարների մէջ. երկրորդ կոտորածը սկսեց Շարուրում, ուր ընդամենը վեց հայ գիւղ կայ՝ ընկած վաթսուն թաթար գիւղի մէջ. երրորդ հարածը նա իջեցրեց նախիջևան քաղաքի ու գաւառի վրայ, ուր հայերը երկու անգամ պակաս են թաթարներից, որոնց մէջքը, իլրումն ամենայնի, ամրացած է Շարուրի 60 ցեղակից գիւղերով և այլն: Բայց նա, այսինքն թշնամին, իր բախար երբէք չը փորձեց Ալէքսանդրոպօլում, ուր 30 000 հայութեան մէջ միայն 3000 թաթար կայ և քաղաքի շրջակայքն էլ ամբողջովին հայաբնակ են:

Եւ ով հետեւել է հայ-թաթարական ընդհարումնե- րի ընթացքին ու զարգացմանը Վովկասում՝ հաւանօրէն նկատած կը լինի, որ հայերը այդ ժամանակ կամովին

ստանձնել էին ծիծաղաշարժ ասպետի դեր: Հէնց որ Ղարաբաղում կամ Երևանեան նահանգում թաթար- ների որ և է թոյլ կէտ ենթարկուում էր յարձակման, իսկոյն Բագւի պատուաւոր թաթարները ներշնչում էին այնտեղի իշխան հայերին, թէ թուրք ամբոխը չափազանց գրգուռած է և իրանք այլ ևս չեն կարող պատասխանատու լինել Բագւայ խաղաղութեան համար: Եւ հեռագիրները անմիջապէս հայերի կողմից թուրքում էին այս բովանդակութեամբ. «ի սէր Աստուծոյ՝ դա- դարեցրէք, եթէ ո՛չ՝ Բագւի հայերը կը տրորւին ոտքի տակ»: Մինչդեռ Ալէքսանդրոպօլի թաթարները, հայերի ներշնչմամբ, պարբերաբար հեռագրում էին ուր հարկն է, որ իրանք կատարելապէս ապահով են, որ իրանց մազին դիպչող չի լինի:

Բայց այս բոլորից չպէտք է, ի հարկէ, եզրակացնել, թէ մենք շարունակ պիտի որոնենք թշնամու թոյլ կէ- տերը և յանուն ինքնապաշտպանութեան կոտորենք անպաշտպաններին: Բողոքովին արդար կը լինէր և խա- ղաղացման համար միանգամայն նպատակայարմար, եթէ պատժի և պատասխանատուութեան ենթարկէինք մի- միայն յանցաւոր շրջանը: Եւ այսպէս, եթէ Բագւի կո- տորածից անմիջապէս յետոյ կարողանայինք ինքնապաշտ- պանութիւնից անցնել հակայարձակման, չարիքը, ան- շուշտ, դրանով էլ կը սահմանափակէր և մենք չէինք լինի երկամբայ սոսկումների ակամայ մասնակիցը:

Թիւրիմացութիւններից հեռու մնալու համար պիտի շեշտուի, որ վերջին երկու հասկացողութիւնները, այ- սինքն «պատիժ յանցաւոր շրջանին կամ յարձակում թշնամու որ և է թոյլ կէտի վրայ», միմեանց չեն հա- կասում. ընդհակառակը՝ նրանք լրացնում են իրար:

Պրանից եզրակացնուում է ա՛յն, որ ըստ կարելոյն պիտի աշխատենք պատժի ենթարկել յանցաւոր շրջանը:

իսկ այդ պատիժը ուր անհնարին է դառնում պայմաններին շնորհիւ,—ամենեւին խորշելու չենք հակա-հար-
 ւածը ուղղելու թշնամու թող կէտերի վրայ.. Մեր
 միտքն ու զգացումը ըմբոստանում են դրա դէմ. սա-
 կայն, ի՞նչ արած.—դա մի ցաւոտ, ճակատագրական
 անհրաժեշտութիւն է, որի հետ կամայ-ակամայ հաշու-
 ւում էք...

Ձգում եմ, որ ընթերցողս իսկոյն պիտի մտածի, թէ
 այս հայեացքը գուցէ ճիշտ է Կովկասի վերաբերմամբ,
 ուր հայ-թաթարական ընդհարումներն ապացուցին, որ
 հայերը ներկայանում են այնտեղ իբրև կուռ ու կողմ.
 հապա ի՞նչ կարող են անել տաճկահայերը, որոնք օս-
 մանեան պետութեան մէջ ամեն տեղ կազմում են
 փոքրամասնութիւն և, որ գլխաւորն է, նրանք՝ պայ-
 մանների շնորհիւ, զինւած են համեմատաբար քիչ ու
 անվարժ են զէնքի գործածութեան:

Եթէ բոլոր օտար ազգերը կամ աւելի շուտով՝ մահ-
 մետական ազգերը Տաճկաստանում միանան հայերի
 դէմ և դեռ զօրքերն էլ օգնեն առաջիններին,—տա-
 րակոյս չկայ, որ խօսք անգամ չի կարող լինել ինքնա-
 պաշտպանութեան մասին: Բայց ենթադրելով, որ
 սահմանադրական ռեժիմի օրով հազիւ թէ երբ և
 իցէ կայանայ այդպիսի մի միութիւն և ծագելիք ընդ-
 հարումը, ուրեմն, կարող է լինել միմիայն այս կամ
 այն ցեղի հետ առանձին, այն ժամանակ պարզ կը տես-
 նենք, որ ապագայում ընդհարող ցեղը, որն էլ լինի
 նա, առանձին վերցրած՝ իր թւով խոշոր մեծամասնու-
 թիւն չի կազմում հայաբնակ շրջաններում և դրանով
 հեշտացնում է հայերի ինքնապաշտպանութեան գործը:

Բայց մի րոպէ ենթադրենք հակառակը—որ նոյն
 իսկ ապագայում էլ թիւրքիոյ մահմետական ցեղերը
 միաբանին առաջ բերելու հայերի ընդհանուր ջարդ:

Ի՞նչ պէտք է անել այդ դէպքում:

Այդ դէպքում հայ ժողովուրդը պէտք
 է անպայման համոզուի, որ ջարդի մէջ կայ
 կառավարու թեան մասնակցութիւնը և,
 վերջապէս, դէն շարտի ոչխարի հաւատ-
 քը դէպի զասպարհ ու խորապէս անվստահ
 դէպի գայլերը՝ պէտք է օրհասական կուռ
 մղի բոլոր հնարաւոր միջոցներով, քանի
 որ առանց դիմադրելու էլ միւսնոյն է
 պիտի կոտորուի. իսկ դիմադրութիւնով
 կոտորելը մի կողմից սահմանափակում
 է սեփական զոհերի թիւը, միւս կողմից
 էլ ունի և՛ այն առաւելութիւնը, որ թըշ-
 նամին թէ և ի վերջոյ յաղթական, բայց
 կուռ մէջ զօրոջ քանակութեամբ զոհեր
 տալով հայկական մի շրջանում, կ'զգու-
 շանայ պըրկերեսու համար ձակ լինել
 գոնէ միւս շրջաններում:

Ծանօթ. Հարկ կայ յիշեցնելու, որ ինքնապաշտպա-
 նութեան բանակը պէտք է ծայրայնորէն զօրջ լինի
 զինադառար կամ զինաթափութեան յորդորների հան-
 դէպ, որպէս զի չը կրննին անցեալի ողբերգական սխալ-
 ները: Ձը պէտք է զինաթափ լինել պատմական խոս-
 տումների առջև: Մինչև կառավարութիւնը լուրջ, հաս-
 տատուն երաշխիք չը տայ, մինչև խաղաղութիւնը չը
 վերականգնի կատարելապէս-- զինաթափութեան խըն-
 դերը չը պիտի զբաղեցնի մարմինները:

Պ Ա Շ Տ Պ Ա Ն Ո Ւ Մ Ն

Ենթադրելով որ իւրաքանչիւր գիւղ արդէն նախապատրաստել է ինքնապաշտպանութեան համար վերը ասուած ցուցմունքների համաձայն, կ'ստանանք հետեւեալ պատկերը.

Գիւղն ամրացրած է յարմարագոյն դիրքերով: Գիշեր ժամանակ զինւած պահապանների մի խումբ գրաւում է այդ դիրքերն ու գիւղի մուտքերը, իսկ միւսը՝ պոյոտներ է գործում գիւղի շուրջը: Թէ՛ մէկ և թէ՛ միւս խումբը պահում է իր մօտ շներ, որոնք տեսնում են աւելի հեռուն և իրանց հաջոցով հաստատում են թըշնամու ներկայութիւնը մերձակայքում: Շրջուն խումբը անմիջապէս ձեռնարկում է խուզարկութեան իր շների հետ միասին: Հանդիպելով թշնամու առաջին շարքերին, խումբն իսկոյն հրացաններ է պարպում նրանց կողմը: Այդ ազդարար ձայնը լսելուն պէս՝ գիւղում գտնուող պահապանները իրանք դիրքերի վրայ մնալով կազմ ու պատրաստ՝ խփում են եկեղեցու զանգերը՝ իբրև նշան մօտալուտ վտանգի և միաժամանակ լրատուներ են ուղարկում զինւած մարդկանց տները: Սրանք շտապում են իրանց համար նախորոշած դիրքերը, միւս կողմից էլ շրջուն խումբն է նահանջում դէպի գիւղ: Միաժամանակ այդ բոլորի հետ, քանի որ դեռ ևս չի սկսել

կռիւր և գիւղից դուրս գալու հնարաւորութիւն կայ սուրհանդակները դուրս են գալիս ու գիւղից փոքր ինչ՝ հեռու որ և իցէ տեղ պահւած՝ սպասում են հետեւանքին: Եթէ կռիւն սկսում է, սրանք վազում են կամ ձին քշում դէպի հարեան գիւղերը՝ հաւար ձգելու: Հակառակ դէպքում, այսինքն եթէ թշնամին այս կամ այն պատճառով յետ է նահանջում առանց կռւի, հարկ չկայ հարեան գիւղերի թուուցիկ խմբերին անհանգիստ անելու:

Ընդհարման հէնց սկզբում գիւղի բոլոր ծայրատներից կանայք ու երեխաները քաշոււմ են կենտրոնական մասերը, որ իրանց լաց ու կոծով և աղմուկով շփոթմունք ու իրարանցում չձգեն կուռղների մէջ: Գիմադրութիւնը շարունակոււմ է բոլոր ա'յն կէտերում ուր երևում է թշնամին: Իսկ ա'յն կէտերում, ուր չկայ թշնամին, զինւած մարդիկ չպէտք է համարձակւին մի գնդակ անգամ արձակելու: Այդպիսի անմիտ հրացանաձգութիւնը մոլորութեան մէջ կը ձգի կուռղներին. կարծելով, թէ գիւղը շրջապատւած է բոլոր կողմերից ու բազմաթիւ թշնամիներով՝ նրանց ո գ ի ն կը տատանւի և ինքնավստահութիւնը կը խախտւի, որի վերջը կը լինի ողբերգական պարտութիւն: Ա'յն կէտերը, ուր թշնամի չկայ, իրանք՝ կուռղները ո'չ մի գնդակ չարձակելով հանդերձ, իրանցից պէտք է մի քանի մարդ ուղարկեն ուժեղացնելու միւս ա'յն կէտերը, ուր աւելի սաստիկ է հրացանաձգութիւնը:

Մի առ ժամանակ յետոյ հասնում է ամենամօտ հարեան թուուցիկ խումբը և կրակ է սկսում թշնամու թիկունքից: Այդ պարագայում՝ հակառակորդը իր հըրացանները դարձնում է թիկունքից զարկող թուուցիկ խմբի կողմը՝ ինքնապաշտպանութեան համար, և փոխադարձ հրացանաձգութեան ձայների ուղղութիւնից

պարզ հասկանալի է դառնում օգնական խմբի երեւալը: Գիւղից անմիջապէս դուրս է գալիս մի խմբակ դէպի այդ կողմը, որով թշնամին առնւում է երկու կրակի մէջ: Անհնարին լինելով մնալ երկու կրակի մէջ՝ թըշնամին նահանջում է աջ ու ձախ կողմերի վրայ: Այսպիսով ճանապարհը այդ կէտի վրայ մաքրւում է և օգնական խումբը, առանց յապաղելու, մտնում է գիւղ: Գործողութեան այս ձևը կրկնւում է ամեն-մի օժանդակ խումբ երեւալու ժամանակ, մինչև որ յարձակման ենթարկւած գիւղը բաւականաչափ ուժեղանում է դրսից եկած օգնական ուժերով, և գրոհ է տալիս թշնամու վրայ ու ցրում նրան:

Այսպէս կատարւում է, ի հարկէ, երբ որ օգնութեան եկող ուժերը հասնում են փոքրիկ, հետեւապէս թոյլ խմբակներով: Իսկ երբ որ նրանք լինում են միանգամից շատեր ու ուժեղ, հարկ չկայ նրանց գիւղի մէջ առնելու համար միջոցների դիմել: Այն ժամանակ նրանք սկսում են իրանց ուժեղ կռիւը թշնամու թիկունքից և գիւղից էլ դուրս են գալիս դիմադրող խմբերը, ու երկու կողմից հակառակորդին առնելով երկու կրակի մէջ՝ րոպէապէս ցրում են նրան: Պէտք է շեշտենք, թէ յարձակումները առհասարակ կատարւում են արշալոյսին—ինչպէս ժողովուրդն է ասում՝ «քնի քաղցր ժամանակը»: Դրա համար էլ անհրաժեշտ է խիստ կծուորը, որ այդ ժամանակ պահպանները չթուլացնեն իրանց հսկողութիւնը և, որ վատթարագոյնն է՝ չքնեն:

Այսբանը գիշերային պաշտպանողական ընդհարման մասին.

Բայց յարձակումը կարող է տեղի ունենալ և՛ ցերեկը: Ցերեկը թշնամու յարձակումը կարող է կատարել զաշտային աշխատակողները կամ գիւղի վրայ և կամ

երկու կէտի վրայ էլ միաժամանակ: Բացայայտ լինելու համար՝ վերցնենք իւրաքանչիւր դէպքը առանձին:

ՅԱՐԱՎԱԿՈՒՄ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԴՈՐՆԵՐԻ ՎՐԱՅ

Դաշտային աշխատակողների վրայ եթէ յարձակումը կատարւում է ճակատից, և ետեւը—դէպի գիւղը ճանապարհն ազատ է պաշարումից,—տարակոյս չկայ, որ աշխատակողները փախչելու են դէպի գիւղ, իսկ նրանց վրայ հսկող թուղթիկ խումբը կռիւ է բռնելու հակառակորդի հետ, որպէսզի նրանց յարձակողական ընթացքը դանդաղեցնի և ժամանակ տայ գիւղացիներին՝ ապահով փախուստի համար: Վտանգն անցնելուց յետոյ, խումբն էլ կուելով նահանջելու է դէպի գիւղ: Իսկ եթէ յարձակումը զաշտային աշխատակողների վրայ կատարւում է ետեւից—գիւղի կողմից, և ճանապարհը դէպի գիւղ ուրեմն, փակւած է,—այն ժամանակ խումբը աշխատակողներին անց է կացնում դէպի հարեան գիւղը—եթէ մօտ է նա,—անշուշտ դարձեալ կուելով վերը յիշած կարգով, յետոյ ինքը վերադառնում իրանց գիւղը՝ նրան պաշտպանելու համար:

Բայց կարող է պատահել, թէ և հազարէպ, որ զաշտային աշխատակողները յանկարծ պաշարւին միաժամանակ երկու կողմից և փախուստի ճանապարհ չունենան ինչպէս դէպի հարեան, նոյնպէս և դէպի իրանց գիւղը: Այսպիսի պայմաններում միայն մի ելք կայ—որ աշխատակողները իսկոյն հաւաքւին մօտակայ ամենաու-

Ժեղ գիրքի վրայ և խուժըն սկսի նրանց պաշտպանել, մինչև որ հրացանների ձայնի վրայ օգնութեան հասնեն իրանց գիւղի մնայուն և հարեան գիւղերի թուլցիկ խմբակները:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԳԻՒՂԻ ՎՐԱՅ

Եթէ յարձակումը սկսուում է միայն գիւղի վրայ, այնտեղ գտնուող մնայուն խուժըր, անտարակոյս, իսկոյն ձեռնարկում է ինքնապաշտպանութեան: Իսկ այդ ժամանակ դաշտում գտնուող թուլցիկ խմբակը, չէզոք չըմնալու և անգործութեան չմատնելու համար, աշխատաւորներին 2-3 հրացանաւորների հսկողութեան տակ ճամբու է դնում դէպի մօտակայ հարեան գիւղը, իսկ ինքը շտապով վերադառնում է իր գիւղը՝ պաշարածներին օգնելու: Գրանից քիչ յետոյ, հաւանօրէն շուտով օգնութեան կը հասնեն նաև հարեան թուլցիկ խմբերը, որոնց լուր տուած կը լինեն դաշտային աշխատանքից փախածները:

ՅԱՐՁԱԿՈՒՄ ԳԻՒՂԻ ԵՒ ԴԱՇՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՒՈՐՆԵՐԻ ՎՐԱՅ
Մ Ի Ա Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Վերը նկարագրած դէպքերի հետ համեմատելով՝ աւելի դժուար ու ծանր է, երբ թշնամին բաժանւած երկու մասի՝ մի թևով յարձակում է գիւղի վրայ, իսկ միւսով՝ զարկում է դաշտային աշխատաւորներին: Այսպիսի աննպաստ պայմաններում միակ ելքն այն է, որ մնայուն խուժըր յամառօրէն պաշտպանի գիւղը, իսկ թուլցիկը՝ դաշտային աշխատաւորներին, մինչև օգնութեան հասնեն օժանդակ ուժեր շրջակայ գիւղերից:

ՅԱՐՁԱԿՈՒՄ

Ազգային ընդհարման ժամանակ յարձակումը հակառակորդի վրայ կազմակերպուում է երեք նպատակով.

- ա) Զարդ տալ և դրանով սանձահարել թշնամի այն տարրերին, որոնք հաշտ չեն վերաբերում հայերին և սրանց ֆիզիքական ու նիւթական վրնասներ են հասցնում պարբերական յարձակումներով:
- բ) Ծագելիք վտանգը կանխելու համար՝ ն ա խ ա յ ա յ ա ռ ձ ա կ մ ա ն ենթարկել այն գիւղը կամ շրջանը, ուր պատրաստուում է յարձակում հայերի դէմ:
- գ) Իբրև պատիժ՝ յարձակել այն գիւղի կամ շրջանի վրայ, որն արդէն ֆիզիքական ու նիւթական որոշ վնասներ է տուել հայերին:

Թէև նպատակները տարբեր, բայց երեք դէպքերումն էլ յարձակման միջոցներն ու ձևերը նոյնանման են բոլոր մանրամասներով: Գրա համար էլ այստեղ առաջարկելու է միայն մի նախագիծ (պրօէկտ):

Բայց այդ նախագիծը անհրաժեշտօրէն պէտք է բաղկացած լինի երկու մասից.

- 1) Յարձակում շրջանի վրայ
- 2) Յարձակում միայն մի գիւղի վրայ:

Յարձակման համար ընտրել մի ամբողջ թշնամի շըրջան, բաղկացած գուցէ մի քանի տասնեակ գիւղերից, — դա չափազանց լուրջ ու վտանգաւոր գործ է, որին պէտք է մօտենալ մեծ զգուշութեամբ և մի շարք պայմաններ լաւ ուսումնասիրելուց յետոյ միայն:

Այդ ուսումնասիրութիւնը պէտք է կայանայ հետեւեալ հարցերի լուսաբանութեան մէջ:

- ա) Քանի՞ գիւղից է բաղկացած շրջանը:
- բ) Ո՞րքան հեռաւորութիւն ունի մի գիւղը միւսից:
- գ) Մօտաւորապէս ո՞րքան բնակիչ ունի իւրաքանչիւր գիւղ:
- դ) Մօտաւորապէս ո՞րքան կուտոյ ոյժ է ներկայացնում ամեն մի գիւղ առանձին:
- ե) Ընդհանրապէս ի՞նչ տեսակ զէնքերով է զինւած գիւղը և ի՞նչ չափով:
- զ) Բնական ու արհեստական ի՞նչ ամրութիւններ ունի ամեն մի գիւղ:
- է) Ո՞ր կողմից և ի՞նչքան ժամանակից յետոյ կարող են օգնութեան հասնել թշնամի օժանդակ ոյժեր յարձակման ենթակայ կէտը:
- ը) Օգնութեան գալիք ոյժերը ո՞րոնք պիտի լինին — ցեղակից հարեան գիւղացիներ, թէ կառավարական զօրքե՞ր:
- թ) Ի՞նչ գիրք է բռնում առհասարակ կառավարութիւնը գէպի յարձակողներն ու ինքնապաշտպանները:
- ժ) Կա՞ն արդեօք յարմար անցքեր ու կիրճեր՝ գալիք օժանդակ ուժերի ճանապարհը փակելու համար:
- ի) Կա՞ն արդեօք ճանապարհ ու հնարաւորութիւն ապահով նահանջի համար՝ պարտութեան դէպքում, և այլն:

Այս բոլոր հարցերը լաւապէս տեսակէտից թէև չափազանց կարևոր, բայց նրանց մեծ մասը դժւար ուսումնասիրելի է, մանաւանդ ազգային ընդհարման ժամանակ, երբ ուժեղանում է ցեղի գոյութեան պահպանման բնազդն ու ամեն անհաս խորին գաղտնապահութիւնը դարձնում է իրեն համար սրբաշան գործ: Եւ այս դրութիւնը, անշուշտ, ստիպելու է ուսումնասիրողին յաճախ բաւականանալ միայն հաւանական ենթադրութիւններով, մանաւանդ այս կամ այն գիւղի զինման չափը որոշելիս: Այդ պատճառով էլ զինման մօտաւոր չափը որոշելու համար՝ հարկաւոր է նկատողութեան առնել գիւղի աշխարհագրական ու ժողովրդագրական դիրքը և ժողովրդի զբաղմունքը — ինչպէս օրինակ. — մեծ և կենտրոնական գիւղերը իրանց համարում են համեմատաբար ապահով և զինւած են լինում թոյլ: Խաղաղ զբաղմունքով պարապողները, ինչպէս երկրագործները, զինւած են լինում նոյնպէս թոյլ: Լաւ զինւած ու կուսելու ընդունակ են լինում գլխաւորապէս աշխրթները, աւագակութիւնով ապրողները և սահմանագլխի վրայ գտնուող բոլոր այն գիւղերը, որոնք պարապում են մաքսանենգութեամբ (կօտրաբանդով):

Բայց ի՞նչ էլ լինի, ո՞րքան էլ նպաստաւոր հետեւանքների յանգի ուսումնասիրութիւնը, — այնուամենայնիւ վտանգաւոր գործ է յարձակումը որ և է շրջանի վրայ՝ միաժամանակ բոլոր կողմերից: Թէև յարձակման այդ ձևը ունի այն առաւելութիւնը, որ կարճ միջոցում, նախ քան թշնամի օգնական ոյժերի գալը, յարձակողները կարող են մեծ աւերածութիւնների ենթակել այդ շրջանը և (աւարտած լինելով իրանց գործը) կը հեռանան դէպքի վայրից վաղաժամ — վտանգը ծագելուց առաջ, — բայց երբէք չպէտք է մոռանալ, որ այդ-

պիսի մի խոշոր ձեռնարկի համար հարկաւոր է ձեռքի տակ ունենալ կուռղ ոյժերի մեծ քանակութիւն— առնուազն կրկնակի՝ յարձակման ենթակայ իւրաքանչիւր կէտի համար (քան ունի թշնամին): Եւ որովհետեւ ազգային ընդհարման ժամանակ յարձակուող կողմը հազիւ թէ կարողանայ ներկայացնել մարտական ոյժերի այգպիսի գերակշռութիւն, ուրեմն պէտք է բաւականանալ մի, կամ առաւաւելն՝ երկու կէտով: Ընտրած կէտը վերջնապէս յաղթահարելուց յետոյ՝ ամենեին դժւար չէ՝ անցնել մտակայ երկրորդ գիւղը, այնուհետեւ երրորդը և այդպէս շարունակ, մինչև որ կ'երեւան նշանները ընդգիծագիր լուրջ ոյժի, և յարձակողները ստիպւած կը լինին կանխօրէն յետ խաղալու, բայց նախապէս ապահոված լինելով նահանջի ճանապարհը՝ պահակ-խմբակներով:

Յ Ա Ր Ձ Ա Կ Ո Ի Մ Մ Ի Ա Յ Ն Մ Ի Գ Ի Ի Ղ Ի Վ Ր Ա Յ

Առհասարակ լա՛ւ մշակւած և գործնականօրէն կազմած ծրագիրը գործի աջողութեան գլխաւոր գրաւականն է: Առաւել ևս պատերազմականը և՛ մանաւանդ յարձակողականը:

Ուրիշ որ և է՝ ծրագիր— եթէ պակասաւոր է նա— գործադրութեան ժամանակ երևան կը հանէ իր թերութիւնները և դրանց դեռ կարելի է ուղղել, թէկուզ որոշ փնասներից յետոյ:

Այդպէս չէ՛, սակայն, ուղղականը և՛ յատկապէս յարձակողականը:

Այդ տեղ ճակատ առ ճակատ պիտի չափուի թըը-

նամուդ հետ և չա՛տ կարճ ժամանակ: Հետեւանքը յաղթութիւն է կամ պարտութիւն: Ինչ որ կորցնես՝ այդ կը լինի անդառնալի և ոչինչ չի՛ մնայ ուղղելու, ոչինչ չե՛ս ունենայ շտկելու:

Բայց դա դեռ բոլորը չէ:

Պարտութիւնը առաջ է բերում ոգիի անկում, իսկ յաղթութիւնը խրախուսանք— հետեւանքներ, որոնք ահագին հոգեբանական դեր ունին կողմերի վրայ յաջորդ ընդհարումների ժամանակ:

Խնդիրը լինելով այսչափ ծանրակշիռ և հետեւանքները լուրջ ու անուղղելի,— պէտք է, ուրեմն, նրան մօտենալ մեծ զգուշութեամբ և ընտրել առհասարակ թշնամու թոյլ կողմերը:

Բայց սա դեռ ևս չի նշանակում, թէ երբէք չը պէտք է մօտենալ թշնամու սրտին: Պէտք է և՛ անպատճառ պէտք է մօտենալ, բայց միայն հնարաւորութեան, այսինքն ոյժերի գերակշռութեան դէպքում և ո՛չ թէ ներկայ ու ապագայ ընդհարումների բախտը անհաշիւ կերպով գնել քարթի վրայ:

Այժմ դառնանք ծրագրին:

Ի՞նչ նիւթեր են հարկաւոր և ի՞նչպէս պէտք է կազմել յարձակողական ծրագիրը:

1) Նախ և առաջ յարձակման համար պէտք է ընտրել մի որոշ գիւղ և յատկապէս այնպիսին, որ նրան պաշարած ժամանակ յարձակողների թիկունքը (ТЫЛЪ) լինի թշնամուց ազատ և նահանջի ճանապարհը՝ ապահով:

2) Գիտենալ ընտրած կէտի մարտական ոյժերի մօտաւոր և սեփականի ճիշտ չափը: Ի նկատի ունենալով, որ պաշարողները վարելու են պաշտպանողական կռիւ ընկան ու արհեստական դիրքերից, իսկ յարձակողները լինելու են ան-

պատասպար մինչև գիւղի կամ որոշ գիւղքերի գը-
րաւումը, վերջինները պէտք է կազմեն թւական
գերակշռութիւն—առնուազն կրկնակի կամ եռակի:
Աւելին, ի հարկէ, առաւել ևս կը դիւրացնի
գիւղի հեշտ ու արագ գրաւումը:

- 3) Նախօրօք մօտաւորապէս գիտենալ ընտրած կէտի
բնական ու արհեստական ամրութիւնները՝ հար-
կաւոր դէպքում նրանց գրաւելու կամ այնտեղից
տեղացող գնդակներից խուսափելու համար:
- 4) Ընտրել նահանջի յարմարագոյն ճանապարհը և
նրան կանխապէս ապահովել պահակ-խմբակով:
- 5) Հաշի առնել թէ մօտակայ ո՞ր գիւղերից և ո՞ր
ճանապարհներով կարող են օգնութեան գալ
պաշարաւածներին և վաղօրօք փակել այդ ճանա-
պարհները պահակ-խմբակներով:
- 6) Ծրագրել, որ գիւղը պէտք է ենթարկւի յար-
ձակման միայն երեք որոշ կողմերից, իսկ չորրորդ
կողմը թողնւի ազատ՝ պաշարաւածներին փախուս-
տի հնարաւորութիւն տալու համար: (Եթէ գիւղը
պաշարւի բոլոր չորս կողմերից, կարող է իրա-
կանանալ հոգեբանական հին ասացուածքը—
թէ դարձ օրհասականք հզօրագոյնս կուրին¹⁾): Ազատ
թողնւելիք կողմը պէտք է ընտրել յատկապէս
այնպիսին, որ իր դիմացը—մօտակայքում ունե-
նայ որ և իցէ սար, ձոր կամ ցեղակից գիւղ:
Փախչողները գիմելու են դրանցից ամենամօտիկն
ու յարմարագոյնը և հէնց այդտեղ էլ պէտք է
առաջուց դարան մտած լինի յարձակողներից
մի խումբ՝ փախչողների հետ ընդհարելու հա-
մար: Ուրեմն գիւղի չորրորդ կողմի պաշարումից
ազատումը ո՛չ թէ նպատակ ունի թշնամուն իս-
կապէս փախուստի հնարաւորութիւն տալու, այլ

- առաջ բերելու ընդիմադիր ոյժի բաժանում՝ յաղ-
թութիւնը դիւրացնելու ու արագացնելու համար:
- 7) Հակառակորդին յանկարծակիի բերելու և նրա
մէջ շփոթմունք ու իրարանցում ձգելու համար՝
յարձակման ժամանակը նշանակել արշալոյսին:
(Արշալոյսին արթուն են լինում միայն պահա-
պանները (եթէ կան). դրա համար էլ շուտով
տեղի է ունենում շփոթմունք ու իրարանցում:
Արշալոյսից աւելի վաղ յարձակելը նպատակա-
յարմար չէ, որովհետև յարձակողները ստիպ-
ւած կը լինեն անծանօթ վայրում մթութեան
մէջ խարխափել աւելի երկար (մինչև լոյսի բա-
ցումը) և այդ պատճառով էլ տալ աւելորդ զոհեր):
- 8) Շփոթմունքը աւելի կատարեալ անելու համար՝
պէտք է անմիջապէս հրդեհել ինչ որ կարելի է
—չոր խոտի դէզ, ցախակոյտ և այլն, որոնց վա-
ռելու համար արշաւախումբը պէտք է պատրաս-
տի ունենայ հարկաւոր նիւթերը:
- 9) Եթէ արշաւախմբի մէջ չը կան ձիաւորներ,
պէտք է անպատճառ վերցնել մի քանի հատ ձի՝
վիրաւորներին ու սպանւածներին հայկական
շրջան տեղափոխելու համար:

Այսպիսի մի ծրագիր կազմելու համար՝ կարևոր տե-
ղեկութիւնները պէտք է ձեռք բերել ձեռնհաս ու
վստահելի գործակալների միջոցով ամենախիտ գաղտ-
նապահութեամբ:

Այնուհետև կը մնայ կազմակերպել արշաւախումբը,
նոյնպէս խիտ գաղտնապահութեամբ:

Այն ամենը, ինչ հարկաւոր է արշաւախումբը ամ-
բողջացնելու համար, արդէն պատրաստի կայ կազմա-
կերպւած ինքնապաշտպանութեան մէջ իւրաքանչիւր
շրջանում: Ինչպէս օրինակ.— Հրամանատար կամ Շըր-

ջանապետ, Զինւորական Շտաբ և Թուուցիկ խմբակներ ամեն մի գիւղում: Հարկաւոր է միայն դրանց ենթարկել մօբիլիզացիայի (ղօրահաւաք):

Եւ, ի նկատի ունենալով գաղտնապահութեան անհրաժեշտ սկզբունքը, դա կատարոււմ է հետեւեալ կերպով:

Յարձակումից 3-4 օր առաջ գիւղերն են ցրոււմ Զինւորական Շտաբի ձեռնհաս ու վստահելի գործակալները: Դրանցից իւրաքանչիւրը իր համար նշանակած գիւղում, առանց յայտնելու նպատակը, զէնքի տակ է կոչոււմ Թուուցիկ խմբակը, նրան դնում կարգի ու կանոնի տակ, զէնքի ու սաղմամթերքի պակասը լրացնում և ապա տեղեկագրում Զինւորական Շտաբին արշաւելու պատրաստ մարտական ոյժի որակն ու քանակը:

Այնուհետև Զինւորական Շտաբը նշանակում է յարմարագոյն հաւաքատեղի որ և իցէ հայկական գիւղ կամ աւելի լաւ է անմարդաբնակ տեղ, ըստ կարելոյն մօտ յարձակման ենթարկելիք գիւղին, որոշում է օրը և հրահանգ է տալիս, որ բոլոր Թուուցիկները այդ օրը, մութը պատելուց յետոյ, շարժւին դէպի հաւաքատեղին:

Այստեղ չը մոռանանք շեշտելու, որ բոլոր այն Թուուցիկները, որոնք ապրում են հաւաքատեղից հեռու աւելի քան երեք ժամով, նրանք՝ յոգնածութիւնից խուսափելու համար, պէտք է փոխադրւին յարձակման կէտին մօտ գտնուող հայկական գիւղերը մի օր առաջ:

Ժողովման գիշերը հաւաքատեղին է հասնում ամենքից առաջ Հրամանատարը՝ իր Զինւորական Շտաբով և ընդունում է հետզհետէ այնտեղ եկող Թուուցիկ խմբակներին: Ամենքը հաւաքւելուց և փոքր ինչ հանգըստանալուց յետոյ, նոր միայն Հրամանատարը յայտնում է մօբիլիզացիայի նպատակը, բացատրում է յար-

ձակման անհրաժեշտութիւնը, ինքնապաշտպանութեան տեսակէտից, ներշնչում ու ոգևորում է զինւորներին, տալիս է նրանց հարկաւոր հրահանգները, չը մոռանալով շեշտելու որ ամեն տեղ և բոլոր ժամանակներում իսկական վեհանձն կտրիչները միշտ խնայել են կանանց ու երեխաներին:

Այս բոլորից յետոյ, պահակ-խմբակները ուղարկոււմ են իրանց համար ծրագրած տեղերը և արշաւախումբը քայլում է որոշած գիւղի վրայ այն հաշուով, որ ճիշտ արշալոյսին սկսւի յարձակումը:

Միայն այդ գիւղի կամ — եթէ ներում են պայմաններն ու ժամանակը — նա՛նք ուրիշ մի քանի հարևան գիւղերի հետ գործը վերջացնելուց յետոյ, արշաւախումբը յետ է նահանջում և իր Թուուցիկ խմբակները ցրում է հայկական բոլոր այն գիւղերում, ուր՝ այդ դէպքի ազդեցութեան տակ, կարող է ենթադրւել հասնական հակա-յարձակում թշնամու կողմից:

ԽՄԲԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

Խմբերի շարժումը կատարոււմ է երեք դէպքում.

- 1) Զօրահաւաք՝ արշաւանքի համար:
 - 2) Ուժեղացում՝ թոյլ գիւղի:
 - 3) Օգնութիւն՝ յարձակման ենթակայ գիւղի:
- Առաջին և երկրորդ դէպքում ժամանակը հրամայական ու ստիպողական չէ և խմբերը կարող են ձեռք առնել որոշ նախազգուշութիւններ՝ իրենց ապահով

տեղափոխութեան համար: Մինչդեռ երրորդ դէպքում դրուժիւնը կրիտիկական է և ո՛չ միայն ժամը, այլ և իւրաքանչիւր րոպէն կարող է վճռել կուրի բախտը: Թող հայ գիւղը, որ արգէն ենթակայ է յարձակման և անհաւասար ուժերով — օրհասական մաքառման մէջ է, փրկւած կը լինի, եթէ դրսից օգնութեան հասնին սոսկալի պարտութիւնից միայն մի րոպէ անաջ:

Այսպիսի տագնապալի դրութեան դէպքում չի կարելի և բարոյական իրաւունք չը կայ օգնութեան գընացող խմբերին նախազգուշութիւններ առաջարկել: Միակ բանը, որ կարելի է առաջարկել, այդ այն է՝ որ օգնական խմբերը ընտրեն կարճ ճանապարհ և շտապեն ամբողջ թափով:

Առաջին երկու դէպքում նախազգուշութիւնը հնարաւոր ու կարելոր է և վտանգը միայն մէկն է — ծուղակ, որից պէտք է խուսափել: Ծուղակը թէև ինքնին մէկ, բայց նա արտայայտուում է մի բանի ձևերի մէջ.

- 1) Կ ա մ ու ը ջ .
- 2) Ձ ո ը .
- 3) Խ ը ա մ ա տ .
- 4) Պ ա տ .

Ճանապարհին խմբի համար կ ա մ ու ը ջ ի հ ա ն դիպելը շատ սովորական է: Եւ, ի նկատի ունենալով, որ խմբերի տեղափոխութիւնը առհասարակ կատարուում է և պէ՛տք է կատարել միայն գիշերները, խումբը չը պէտք է իր ամբողջութեամբ կուրորէն անցնի կամուրջի վրայով: Արող է պատահել, որ կամուրջի տակ պահուած լինի թշնամիների մի խումբ և անցնելու վայրկեանին հարկաւոր է անակնկալ մէկ-երկու համազարկ դարանամուտների կողմից, որ կամուրջի վրայով անցնող կենդանի էակները փոխարկւին դիակների: Այդպիսի ծանր վտանգից զերծ մնալու համար՝ խումբը պէտք է

կանգ առնի կամուրջից բաւական հեռու և երկու ընկերոջ միջոցով խուզարկութիւն կատարելուց յետոյ, նո՛ր միայն անցնի կամուրջը:

Ձ ո ը ե ը ը ը նդ հանրապէս լինում են քարոտ կամ անտառոտ — ամենալաւ դարաններ թշնամու համար: Ամբողջ խմբով մտնել ձորի մէջ առանց նախազգուշութիւնների և ենթարկւել դարանամուտ հակառակորդների անսպասելի համազարկներին՝ դա շա՛տ հեռու է խոհեմութիւնից: Հարկաւոր է ձորն անցնել մաս-մաս և ցրւած:

Թշնամի կարող է դարանամուտ լինել և՛ խրամատն եր ու մ ու պ ա տ ե ը ի տ ա կ, որոնց մօտից պէտք է անցնի խումբը: Այդպիսի ծուղակներից խուսափելու համար՝ պէտք է շրջան անել և անցնել այդ տեղերից հեռու կամ, եթէ չը կայ այդ հնարաւորութիւնը՝ անցնել մաս-մաս, ցրւած և արագ:

Զ է Ն Ք

Շատ սովորական երևոյթ է, որ զէնք ձեռք բերելու ցանկութիւն ունեցող ամեն մի անհատ գիմում է այս կամ այն տեղեակ անձին և հարցնում. — «Ո՞րն է ամենալաւ հրացանը»:

Լաւագոյնը, դիցուք, եպօսնականն է. բայց ի՞նչ օգուտ դրանից, բանի որ հայը չի գնայ Եպօսիա, եպօսնական հրացանն էլ չի գայ Հայաստան:

Ուրեմն ամենից առաջ մենք պէտք է կանգնենք գործնական հողի վրայ:

Հարցին մօտենալով այդ տեսակետից, մեզ համար պէտք է միանգամայն անպէտք հռչակել բոլոր այն տեսակ զէնքերը, որոնք ստացուում են շա՛տ հեռուից և մեծ դժուարութեամբ: Դրանք անպէտք են մանաւանդ այն պատճառով, որ իրենց հետ ունենում են սովորա-

բար փամփոռչանքի քիչ քանակութիւն և եղածն էլ մի առժամանակից յետոյ սպառելով փորձերի, վարժութիւնների և փորքիկ դէպքերի վրայ, զէնքը այնուհետև դառնում է մի անպէտք փայտի կտոր:

Ուրեմն զէնքը պէտք է փնտրենք մեր շուրջը և ահա՛ նրանցից է, որ պիտի ընտրենք լաւագոյնը:

Ենք ապրում ենք երեք պետութիւնների սահմաններում: Այդ պետութիւններից իւրաքանչիւրն ունի երկու տեսակ զէնք—ներկայ (որ այժմ զօրքի ձեռքին է) և նախընթաց (որ զօրքից վերցրել և գործածութիւնից դուրս է հանել): Ռուսաստանում, օրինակ, ներկայ զէնքը „Մօսին“ հրացանն է և նախընթացը՝ „Բերդանը“: Իսկ Տաճկաստանում ներկան „Մաուզէրն“ է և նախընթացը՝ „Մարտինը“: Լաւագոյն և աւելի կատարելագործւած զէնքը, անշուշտ, ներկայինն է. այլապէս կառավարութիւնը չէր վերազինի իր զօրքը այդ զէնքերով: Ուրեմն Ռուսաստանում մենք պիտի ձգտենք ձեռք բերել „Մօսին“ և Տաճկաստանում՝ „Մաուզէր“ *):

Այս երկու տեսակ զէնքերը մեր սահմաններում վերջին կատարելագործութիւնը լինելուց բացի, ներկայացնում են և այն առաւելութիւնը, որ դրանց փամփոռչանքը միշտ կարող ենք ձեռք բերել առատ և աժան:

2ը պէտք է մոռանալ սակայն, որ աշխարհի վրայ գոյութիւն ունեցող բոլոր կառավարութիւնները ժողովուրդներին խստիւ արգելում են գործածութիւնը այն զէնքի, որը գտնուում է զօրքի ձեռքին և այդ արգելքը պայմանաւորում են ծանր պատասխանատուութիւնով:

*) Ռուսաստանում կառավարական մի քանի զինագործարաններ կան, իսկ Տանկաստանում եւ ո՛չ մէկը: Այդ հսկգամանք պարսէ է դնում ռուսամայրի վրայ, որ քրսն գէնքի գործում օգնեն իրենց սանկահայ եղբայրներին:

Այսպիսով բարդութիւններ ու մեծ դժւարութիւններ են ծագում ինչպէս ծախողի, նոյնպէս և առնողի առաջ: Այդպիսի պայմաններում ձեռք բերող զէնքը միշտ կ'լինի քիչ և չի կարող լինուի բաւականութիւն տալ մեր պահանջներին:

Ուրեմն կամայ-ակամայ մենք պէտք է կանգ առնենք գլխաւորապէս նախընթաց զէնքի վրայ:

Այստեղ ինքնին հարց է ծագում, թէ ի՞նչպէս կարելի է դուրս գալ թշնամու դէմ համեմատաբար վատ զէնքերով: Այսպիսի մտածումները միանգամայն անհիմն են: Կախ և առաջ՝ ոչ որ չի արգելում ձգտել աւելի կատարելագործւած զէնքեր ունենալու: Երկրորդ մեր նպատակն է ինքն ապաշտպանութիւն հարևան ժողովուրդներից, որոնք գտնուում են նոյնպիսի պայմանների մէջ, ինչ որ մենք—այսինքն նրանք էլ չը պիտի կարողանան զինել բացառապէս կատարելագործւած զէնքերով: Եւ երրորդ՝ գրեթէ ո՛չ մի առաւելութիւն չի ներկայացնում կատարելագործւած զէնքը մեր ժողովրդի ձեռքում:

Կատարելագործւած հրացանն ունի գլխաւորապէս երեք առաւելութիւն— նա անծուխ է, աւելի արագաձիգ և խփում է շատ հեռու: Բայց այդ յատկութիւնները նշանակութիւն ունին միայն զինւորապէս կրթւած զօրաբանակների համար: Մինչդեռ մեր ժողովուրդը դրա մէջ անհրաժեշտ կարիք չ'ունի, քանի որ նա անվարժ է արագաձգութեան, ու կանոնաւոր համազարկերի արհեստին: Միւս կողմից էլ, նա գլխաւորապէս առիթ է ունենալու ընդհարելու մօտիկ տարածութեան վրայ:

Ընդհարումը տեղի է ունենալու քաղաքում կամ գիւղում: Քաղաքում ամենամեծ տարածութիւնը որևէ փողոցի երկարութիւնն է, որը հազիւ թէ անցնի մի քանի հարիւր քայլից. իսկ մեր յիշած նախընթաց հրացանները արձակում են 1500—2100 քայլ:

Կը մնայ գիւղը:

Գիւղի չորս կողմը, առհասարակ, տարածութիւնը բաց է և թշնամին ցեբեկը նկատուում է դեռ շատ հեռուից: Լաւ կը լինէր, ի հարկէ, որ այդ վտանգն այդպէս էլ մնար կանգնած հեռուում — չը համարձակէր ձօտենալ գիւղին: Բայց համարձակութիւնը կորցնելու համար՝ նախ և առաջ հարկաւոր է սուտօբլ: Իսկ թըշնամին արժանաւորապէս սուտօբլ կարող է, երբ դեռ հեռուից նա ենթարկուում է բազմաթիւ վարժ հրացանաձիգների կանոնաւոր համազարկերին և գնդակները նրա գլխին տեղում են կարկուտի պէս: Ենք չունինք կըթլած զօրք *), հապա ուրեմն գործ տեսնողը լինելու է անհաստական հրացանաձգութիւնը: Իսկ անհատը, ինչքան էլ վարժ լինի, կարող է անշեղ զարկել միայն մինչև 400 քայլ: Գրանից այն կողմը կպած գնդակը պատահական նշանակութիւն ունի և օրինական սոկոս չի կազմուում: Այս այսպէս լինելով, տարածութիւնն ուրեմն դադարում է մեզ համար *idée fixe* լինելուց և բոլոր զէնքերը մեր պայմաններում դառնում են պէտքական: Ամենակարճ տարածութեան վրայ խփողն, օրինակ, որսորդական հրացանն է—ընդամենը 50—60 քայլ: Բայց այդ զէնքը մեզ համար և մեր պայմաններում ունի աննման առաւելութիւններ՝ երբ նա փամփուռաւոր է, այսինքն համեմատաբար՝ արագաձիգ: Այդպիսի հրացանների փամփուռները կարելի է լեցնել փոքրիկ գնդակներով (կարտէջ)՝ 9—12 հատ իւրաքանչիւրի մէջ: Այդ բազմաթիւ գնդակիկները արձակած ուղղութեամբ սլանում են ցրած և ամենայն հաւանականութեամբ դրանցից մէկն ու մէկը կը կպչի կէտնապատակին, իսկ միւսները կարող են պատահաբար

*) Կառավարական ժողովրդիկն աւարտած հայ զինուորները ցրած են եւ ամեն մի ընդհարման մէջ չնչին սեկոս են կազմում:

կպչել և՛ ուրիշներին, որոնք գտնուում են կէտնապատակի շուրջը: Մինչդեռ մարտական հրացաններն ունին միայն մի գնդակ, որը կորչում է ապարդիւն, եթէ արձակելու ժամանակ հրացանը շարժուում է նոյնիսկ թեթեւ, կամ նշանը վերցնուում է փոքր ինչ անկանոն: Կը մնայ տարածութեան խնդիրը: Շատերը կը գտնեն, որ 50—60 քայլը չնչին տարածութիւն է և անպատակայարմար: Բայց չէ՞ որ քաղաքներում ընդհարումը տեղի է ունենում փողոցների մէջ, ուրեմն շատ ձօտիկ և գլխաւորապէս լինում է ատրձանակի կռիւ: Իսկ ատրձանակով 20—25 քայլի վրայ անշեղ զարկողները հազաւգիւտ են, մինչդեռ որսորդականը խփում է 50—60 քայլ ամենայն աղողութեամբ՝ նոյնիսկ կիսավարժ մարդկանց ձեռքում:

Աննման է այդ զէնքը մանաւանդ գիշեր ժամանակ թէ՛ բաղաքներում և՛ թէ՛ գիւղում:

Գիշերային մթութեան մէջ մարդկային ուրուականը նկատելի է միայն 20—30 քայլի վրայ, իսկ լուսնի լուսաւորութեան տակ տեսնել կարելի է ամենաշատը մինչև 50—60 քայլ — ճիշտ որսորդական հրացանի տարածութիւնը: Եւ այսպիսի պայմաններում որսորդականի իւրաքանչիւր փամփուռը հաւասար է մի կանոնաւոր համազարկի՝ արձակած 9—12 մարդու կողմից նայելով թէ քանի գնդակիկ կայ այդ փամփուռի մէջ:

Սեզ համար լաւ է նոյնպէս և՛ «որսորդական Մաուզերը»: Դա մագազինաւոր է (5 փամփուռ միանգամից է դրուում) և փամփուռները պարունակում են անծուխ վառօդ ու մի հատիկ գնդակ: Արձակման տարածութիւնը 500—1000 մետր է, ուրեմն մեզ համար մարտական համարելու յարմար: Այդ ձևի հրացաններ—չը գիտեմ արտասահմանից ներմուծւում են Տաճկաստան, թէ չէ, — բայց Ռուսաստանի

Համարեա բոլոր քաղաքներում գիւրին է ձեռք բերել, ինչպէս և փամփուռները:

Այժմ մի քանի խօսք ատրճանակների մասին:

Ատրճանակները բաժանուում են երկու կատեգորիայի՝ ավտոմատիկ և սովորական:

Ավտոմատիկ տեսակներն են՝ մաուզէր, պարրաբել-լիւմ, բրաունինգ և այլն:

Սովորական տեսակներն են՝ Նագան, Սմիտտ և Վէսսօն, Բուլ'դօզ և այլն:

Ավտոմատիկ տեսակներն ունին ա'յն առաւելութիւնները, որ պարունակում են շատ փամփուռտ (6—10), արագաձիգ են, ուժեղ և հեռու խփող: Նրանց գլխաւոր պակասութիւնն էլ ա'յն է, որ մեխանիզմը նուրբ է ու բարդ, դրա համար էլ շուտ աւերւելու ենթակայ:

Սովորական տեսակները ներկայացնում են ճիշտ դրա հակառակ պատկերը:

Երբ հարցը վերաբերի ընտրութեան, դժւար է կանգ առնել այս կամ այն տեսակի վրայ: Նախ այն պատճառով, որ ինչպէս ասացինք, տեսակներից ո'չ մէկը կատարելագոյն է—ամեն մէկն ունի իր առաւելութիւններն ու իր պակասութիւնները: Եւ երկրորդ՝ մենք չունինք մեր տրամադրութեան տակ զինագործարան ու փոխադրութեան յարմարութիւն, որ պատւիրենք ընտրած տեսակը բաւարար չափով: Ստիպւած ենք լինելու բաւականանալ նրանով, ինչ որ կարող ենք ձեռք ձգել: Բայց և այնպէս, կարելի է խորհուրդ տալ, ընդհանրապէս, Մաուզէրը, մանաւանդ գիւղացիներին: Ղա ամենից հեռու ձգողն է և ունի իր վրայ յարմարացրած կոթ (դոնդաղ), որով այդ ատրճանակը մօտենում է հրացանին:

Վ Ե Ր Զ Ա Բ Ա Ն

Կեանքն այլանդակ խաղեր ունի: Այդ խաղերից մէկն է և՛ այս «ուղեցոյցի» անհրաժեշտութեան ծագումը:

Կովկասեան հայկա-թրքական ընդհարումներից անմիջապէս յետոյ, ընկերներս առաջարկեցին ինձ պատրաստել ինքնապաշտպանութեան ներկայ ուղեցոյցը:

Ես տատանուում էի...

Տատանում էի, որովհետեւ գիտէի որ այս պզտիկ բրօշիւրն իր մէջ պիտի պարունակէ արեան դասեր:

Արիւնը ինձ համար խորթ չէ և ո՛չ էլ օտար:

Բայց ես կատարելապէս հասկանում և լիովին համակրում եմ, երբ այդ արիւնը բաց է թողնում ժողովուրդներ տանջող կառավարութեան զարկերակից:

Իսկ այստե՞ղ, այս ուղեցոյցի մէջ...

Սրա մէջ բարոզում է, թէ ի՞նչպէս եղբայրը պէտք է ձեռքերը թաթախի եղբոր արեան մէջ, դրացին կանգնի դրացիի դէմ, մի ժողովուրդ ընդհարւի միւսի հետ...

Դրա համար էլ տատանում էի: Բայց անողորմ կեանքը տարաւ յաղթանակը:

Տաճկաստանում ամենուրեք խուլ շշուկները գուժում են ըէաքսիօն ահաւոր խմորումների մասին, Պարսկաստանում յաճախակի ընդհարում են միապետական ու սահմանադրական երկու հակառակ հոսանքները, իսկ

Ռուսաստանում — ո՞վ գիտէ —ի՛նչ նոր անակնկալ է պատրաստում:

Այլ ևս տատանումը յանցանք է: Ամեն մարդ — որ զգում է դրուժեան լրջութիւնը — պէտք է ասի իր խօսքը, պէտք է յորդորէ, որ հայոց այդ երեք գլխաւոր հատուածները պատրաստին ինքնապաշտպանութեան:

Եւ նրանք ճակատագրօրէն պիտի պատրաստին:

Բայց...

Բայց ինձ կըզգայի հոգեպէս մխիթարած և բարոյապէս վարձատրւած, եթէ մարտական այդ պատրաստութիւնները, իրերի բախտաւոր բերմամբ, մի տենչալի օր զարկէին հրէշային ճակատին բոլոր ա՛յն նենգաւոր կառավարութիւնների ու արածնեալ պարազիտների, որոնք — ազգեր թունաւորելով — մեզ գրել են եղբայրասպան դասեր շարագրելու տխուր անհրաժեշտութեան առաջ:



Վ Ր Ի Պ Ա Կ

Երես 21, տող 18. տպւած է՝ ամօգուտ զոհներ, պէտք է լինի՝ աւելորդ զոհներ:

» 22, տող 7. տպւած է՝ հետ, պէտք է լինի՝ յետ:

2013



Գ Ի Ն Ը 40 Ս Ա Ն Ց Ի Ս